

# Ս Ի Ո Ն

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՅՈՆԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱԳԼԽԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԱՆ

---

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ 1937

---



ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԳԼԽԻ



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### Բ Ո Ւ Ն Վ Է Ր Ք Ը

(ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԵԼՈՅԹԻՆ ԱՌԹԻԻ)

Տօժեալներ կը պակսին դեռ մեզի՝ հարցին խորքն ու պարագաները ճշգրիտ ըմբռնելու և ըստ այնմ արտայայտուիլ կարենալու համար. զի ինչ որ այդ մասին գրեցին կամ հաղորդեցին ցարդ թերթերը, ներուի մեզ ըսել՝ պատահական թղթակցութիւններ էին աւելի, և յաճախ գունատրուած տեղեկատուութիւններ, որոնց՝ ուզիդ պիտի չըլլար անտարակոյս վստահիլ բարբոթիլն: Իսկ ժողովական գումարումներու միջոցին կատարուած յայտարարութիւնները, որոնց արձագանգը թերթերէն է դարձեալ որ կուզայ մեզի, կարծիքներ կամ տեսութիւններ էին, այնքան սեղմ խօսքերու՝ այնքան զուսպ բառերու մէջ պարտրկուած, այնքան կոճկուած պարբերութիւններով արտաբերուած, որ խոհմուտիւն պիտի չըլլար բնաւ տալ անոնց ևս իրենց համար առաջադրուած արժէքը:

Հետեալբար, քանի որ, հակառակ յայտնուած իղձերու և կատարուած շննքերու իսկ, տակաւին անկարելի է եղած մեզի իրազեկ դառնալ բուն իրականութեան, զգուշանալու համար վարկածներու միջև տատանելու անպատեհութենէն ևս, առ այժմ կը բաւականանք զրի առնելով միայն քանի մը տպաւորութիւններ, զորս զործը հեռուէն տուաւ մեզի:

Արդ, առաջին և ընդհանուր տպաւորութիւնը, զոր վերջին վարագոյրին առջև ունեցանք զրիթէ տմէնքս՝ յուսախաբուութեան զգացումը եղաւ, առանց տարակոյսի — Չէինք կարծեր ի վերջոյ հող հասնիլ: Գիտէինք թէ ի՞նչ բարդութիւններու բաւիլ մը դարձած էր հետզհետէ քառասյին վիճակի յանգած այն կեանքը, որ Ամերիկահայոցն էր դեռ մինչև անցեալ տարի. հասկցած էինք թէ խաւ ի խաւ համաբարդուած մտայնութեանց այդ մթնոլորտին մէջ հրաշքի հաւասար զօրութեան մը պէտք կար՝ քակելու համար այդ կնճիղը, բայց վերջապէս, հակառակ այս ամէնուն, սկսեր էինք խորհիլ նաև թէ ազգային արժանապատուութեան զգացումը այնքան խորապէս խոցուած էր ամէնուն մէջ, կիրքերը՝ անեղ փոթորկումներէ վերջ՝ այնպէս մը յոգնած պէտք է լինէին երկուստեք, ու, չքաշուինք վերջապէս ըսելէ, յոյս ունէինք թէ՛ ըրտը կողմերն պիտի, այլ ևս աւելի հանդարտած ողբով արամախոհելով, այնքան պատրաստուած պիտի ըլլալին՝ իւրաքանչիւրն իր զործած ծայրայեղութիւններն զգալու, որ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս ճիշդ ժամանակին մտած պիտի ըլլար իրենց մէջ, խաղաղութեան ձիթենին ի ձեռին:

Գործերն իրօք այդ ընթացքն առած ըլլալ կը թուէին, ու ամէնքս, վարը, հանդիսականի մեր դիրքին մէջ, առանց զիսնալու թէ վերը ի՞նչը կատարուեր էին օր մը առաջ՝ բեմին վրայ, ակնկառոյց կը սպասէինք մտածուած ու նոյն իսկ ծրագրուած բարեք վերջաւորութեան մը բարի լուրին, երբ իրականութիւնը պայթեցաւ յանկարծ, ուռմբի մը չափ ուժգին և ցնցիչ սաստկութեան մը մէջ։

Ինչպէս ըսինք վերև, ի սկզբան ևս, հակառակ որ դէպքերը ծայր աստիճան յոռետեսութեան տանող զահավիժումով մը յալորդեր էին իրարու, հասարակաց զգացումը բոլորովին յուսահատութեան չէր մատնուած, զոհացուցիչ ելքի մը հնարաւորութեան հաւատքը մնացեր էր միշտ։ — Մինչ հաճութեամբ վեր կ'առնենք այս կէտը իբրև մեր ժողովուրդին հանրային ողջմտութեան համար պատուաբեր նիշ մը, նոյն զգացմամբ է որ կը տարուինք այսօր ալ խորհելու թէ մինեոյն ողջմտութեամբ է որ պէտք է այժմ ալ դիմաւորուի զործին այդ կերպի յանգումն ալ։ Բարը արդէն այդ բերումով է որ ինքնին եկաւ մեր զրչին ծայրը. Յուսախաբուութիւն, և ո՛չ թէ Յուսահատութիւն. խաբուեցաւ կամ սխալեցաւ մեր յոյսը, բայց չէ կորսուած ան բնաւ։ Բնդհակառակն, առանց ճշմարտագանցութեան, կարելի է նոյն իսկ ըսել թէ հարցը, այս շատ ճգնաժամային տագնապէն վերջ, կարևոր քայլ մը առած է դէպի իր լուծումը։ — Կ'ըսենք զայս պաղաւրւանով, բայց առանց պատրուակեալ ձեւականութեան, այսինքն կը մտածենք թէ կացութիւնը այնպիսի եղբրքի մը հասած է այլ ևս որ՝ անկէջ վերջ՝ անկարելի պիտի ըլլար անդրագոյնին վրայ խորհիլ։ Եթէ նահանջը կարելի չէ տակաւին, պէտք է զէթ կանգ առնել ուր որ հասուցած են զմեզ դէպքերը. և կանգ առնել՝ զինսթափ, անաղմուկ և սթափ հողով, ատեն մը ևս անձնատուր լինելով պարզայից և ժամանակին, որ մեծագոյն վարպետն է վերջապէս, և որ շատ անգամ անհունապէս աւելի իմաստութեամբ և արդարութեամբ կը դարմանէ ամէն հոգ և պէտք, քան ինչ որ մարդիկ պիտի չկարենային ընել իրենց ամենէն նուրբ ու խոր հնարախոհութիւններով։ Ըսենք աւելի կարճ. անդրագոյնը ասկէջ վերջ անդունդն է, ու պէտք է խնայել Ազգին ու Եկեղեցիին, իրենց այսքան դժխեմ ու ցաւազին դրութեան մէջ՝ նոր և անաւորագոյն դժբախտութեան մէկ ցաւը, Եկեղեցիին մէջ՝ նոր ու ներքին ճեղքումով զոյացած պառակտումի մը արտաւորումը։

Կ'ըսէինք թէ մեր յոյսը չէ կորսուած, այդ յոյսը այն հաւատքն է զոր ունինք այս հարցին գոյութեան և յառաջացման հետ որ և է կերպով առնչուութեան մէջ եղած բոլոր անձերուն եւ հոսանքներուն կողմէ Հայ Եկեղեցիին նկատմամբ տածուած սերտ և ջերմ սիրոյն նկատմամբ։ Ու ժամանակն է որ այդ սէրը երևան գայ աւելի քան երբեք լրջութեամբ և ու խոհականութեան և բարձրագոյն ազգասիրութեան ամէն զեղեցիկ արդիւնքներով։

Երկրորդ տպաւորութիւնը՝ զոր ստացանք մենք խնդրոյն այս ելքին առթիւ կատարուած արտայայտութիւններէն, քիչ մը շատ տարածել ուզուած այն կարծիքն էր թէ դաւ մըն էր եղած, զործին վերջին վայրկեանին յանկարծ վերելիվար շրջելով երկուստեք զրեթէ համաձայնութեամբ նախապատրաստուած կարգադրութիւնը, շուարումի մատնելու համար զանոնք՝ որոնց համար այդ անօրինուութիւնը կրնար իբր թէ շահաւոր ըլլալ զէթ մերձաւոր ապագայի մը համար։ Առանց կա-

տարեկապէս թափանցած լինելու խնդրոյն խորքին, մենք կը կարծենք անկեղծօրէն թէ չի կրնար ճիշդ ըլլալ այդ ենթադրութիւնը: Մենք այդ մասին մեր համոզումը կը դնենք ամենէն աւելի սա հիմին վրայ թէ, այդպիսի անախորժ խաղի մը պէտք պիտի ըլլար մասնակից կամ առ նուազն գիտակ համարել Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետը և իր սրբազան ներկայացուցիչը, նուիրակ Գարեգին Արքեպիսկոպոս: Բացարձակապէս անհնար է մեզի հաշտուիլ այսպիսի մտածումի մը հետ, ոչ միայն որովհետև կրօնական ու ազգային բարձր ու բարձրագոյն դիրքերու աէր այդ երկու յոյժ յարգելի հոգևորականներուն վրայ պիտի չլինայինք ըմբռնել այդպիսի ընթացք մը, այլ որովհետև, իբր շատ մօտէն տեղեակ երկուքին ևս անձնաւորութեանց և բարձրօրէն պարկեշտ նկարագրին, բացարձակապէս անընդունակ կը նկատենք դիրենք այդպիսի բանի մը: Ն. Վ. Տ. Խորէն Ս. Կաթողիկոս այս ցաւոտ խնդրոյն մէջ սկիզբէն իսկ ցոյց տուաւ իր բարձր անհատութիւնը, երբ երկպառակութեան առաջին օրէն հեռագրաւ պատմուիւնց ողբացեալ Աւետի Արքեպիսկոպոսի՝ ջանալ առաջն առնել երկփեղկումին, թոյլ չի տայով որ Դաշնակցականք մեկուսանան. ու նոյն ոգևով էր դարձեալ որ վերջին անգամ ևս անվերապահօրէն և անմիջապէս յայտնեց իր համամտութիւնը՝ նուիրակ Սրբազանէն իրեն առաջարկուած կերպին: Ի՛նչ հարկ իրեն համար՝ ծամածուռ միջոցի, երբ պիտի կրնար սոսկ լուռութեամբ նոյն իսկ յայտնել իր ժխտական պատասխանը: — Ոչ. մեզի համար աւելի բանաւոր և զործնական կը թուի խորհիլ որ քիչ մը աճապարանք դրուած ըլլալ խնդրին մէջ, առանց բոլորին տրամադրութիւնները մշակելու, առանց միտքերու ամբողջապէս հասունացման սպասելու՝ ձեռնարկելով գործի:

Ուրիշ տպաւորութիւն մը, զոր սրտի փոքր տաժանքով չէ որ կրեցինք՝ դիտելով հարցին այս վախճանին յառաջ բերած ազդեցութիւնը զանազան շրջանակներէ ներս, մեզի տուաւ այն չարախնդաց վերաբերմունքը, զոր եթէ ոչ շատեր, այլ ոմանք — որոնցմէ՝ սակայն երբեք սպասելի չէր այդպիսի վարմունք մը — զործին հանդէպ ցոյց տուին տեսակ մը անզուլթ զգացողութեամբ: Մարդիկ կան դեռ, ու ազգային կեանքի ոլորտէն ներս դժբախտաբար, որոնք կարծես ի վիճակի չեն զանազանելու եղբրականը զաւեշտէն, որոնք սիրտ ունին անմիտ ծիծաղով նայելու միշտ ամենէն կսկծալի տեսարանին վրայ, վասնզի կը խորհին թէ ամէն ձախողանք անկում է անպատճառ, և որոնք — ինչպէս տխմարը կամ մանուկը, որոնք խնդալ միայն գիտեն ինկողին վրայ — ծաղրելի կը կարծեն ամէն նոյն իսկ կարծեցեալ անկում: — «Ես պարտուած մըն եմ». արիւնած հոգիի մը վսեմի մօտեցող այս աղեխարշ ճիշդ, որուն մէջ նուիրակ Սրբազանը բուպէսպէս խտացուց ազնուական սրտի մը ամբողջ վրդովանքը, «վա՛յ պարտուածին» ի նամանոյ խօսքեր ընել տուաւ այդպիսիներուն: Բայց անզգայ և կոյր ըլլալու է մարդ, չհասկնայու և չտեսնելու համար թէ Սրբազանը այդ վայրկեանին նոյն իսկ ամենէն ազնիւ յաղթութիւնը կը տանէր՝ իրենց տարօրինակ ընթացքին մէջ ինքզինքնին թերևս յաղթող նկատողներու վրայ, իր այդ բացազանչութեամբ անոնց նայուածքին առկա իր ամենէն պակուցիչ սաստկութեանը մէջ պարգեւով ամբողջ զարհուրանքը վրիպած այն յաղորութեան, որուն համար սակայն աշխարհի մէկ ծայրէն միւսը շունչ ու հողի, սիրտ ու խելք սպասեր էր ինքն ի ինդիր խաղաղութեան:

Յայթուածութիւններ կան, որոնց չչահուած պարագային ալ՝ ոչ նուազ նուիրական կը մնայ իրենց համար յանձն առնուած գոհողութիւնը. Յովսէփեան Սրբազանի պարագան այդպիսիներէն է. ու պարտութիւններ կան, որոնք՝ եթէ ոչ յայթուածան չտփ արագ՝ բայց անոնցմէ աւելի ապահով կը հասցնեն կէտադրուած նպատակին: Կ. Սրբազնութեան զրացած «պարտութիւն»ը այդօրինակներէն է. զի ժողովուրդը որ եւ է ատենէ աւելի ա՛յժմ է որ կրցաւ հասկնալ թէ ո՛րն էր բուն նպատակակէտը, որուն պէտք էր հասնիլ . . . :

Աւելցնենք հոս, ի վերջոյ, թէ մեր գրութեան այս հատուածին մէջ կ'աւանարկենք ոչ թէ կուսակցական գրիչներու, որոնք, որչափ որ տեսանք, ընդհակառակն ուրիշ որ եւ է անգամէ աւելի համեմատաբար աւելի զուստ և յարգալից եղան նուիրակ Սրբազանին նկատմամբ, այլ աւելի անոնց՝ որոնք առանց թերևս հրապարակ գալու, իրենց անխիւններուն և մտերմութեանց մէջ պար բռնեցին Մայր Աթոռոյ արժանաւոր ներկայացուցիչին այս կարծեցեալ անյաշողութեան ի տես, անոնց՝ մէկ խօսքով՝ որոնցմէ իրաւունք ունէինք չսպասելու երբեք այդպիսի վերաբերմունք:

Տպաւորութեանց թիւը կարելի էր դեռ շարունակել, թերևս անօգուտ երկարաբանութեամբ սակայն: Մենք կ'ուզենք կանոգ առնել հոս, քանի մը խօսքով, անոնցմէ մէկին, կարևորագոյնին վրայ, զոր սիրղէն մինչև վերջը անընդհատաբար կրեցինք արդարև ինզորոյն ամբողջ տևողութեան ընթացքին, պայքարին ծնունդ առած օրէն մինչև այս վերջին կարծեցեալ ձախողուածը, և այս ամենէն ալ առաջ ու դեռ յետոյ:

Թող չըսուի երբեք թէ Եկեղեցին քաղաքական իշխանութեան մը ձեռքը խողալիկ է դարձած, այսինքն քաղաքականութեան կը ծառայէ: Այսօրիսի դատում մը ընելու համար շատ հեռուները, մինչև Երևան կամ Մոսկուա երթալու պէտք չկայ: Եկեղեցին, հայ ժողովուրդին կրօնական և բարոյական գոյութեան այդ կազմը, քաղաքականութեան կ'ուզուի ծառայեցնել ահա աւելի քան կէս դարէ, այսինքն այնպիսի թուականէ մ'ի վեր երբ դեռ այդ սեռակէտով չէինք կրնար խորհիլ նոյն իսկ Մոսկուայի և Երևանի մասին: Մ'եր մէջէն, մեր ներքին կեանքէն հանուած թնճուկուած քաղաքականութեանց է որ ընդհանրացած ձեզ մը կայ շատոնց գործիք դարձնելու Եկեղեցին. ու ասիկա է ինքնին մեր բոլոր դժբախտութեանց ու այս վերջինին ալ մեծագոյն պատճառը:

Երբ ոյժ մը կը շեղեցուի իր սեպհական սուղութենէն, ան՝ իբր ոյժ այլ ևս չի կրնար ծառայել ոչ ինքզինքին և ոչ իր շուրջը պտուտքուած նկատումներուն: Եկեղեցին, ինչպէս միշտ և ամէն ազգի, նոյնպէս մեր մէջ ոյժ մը եղած է միշտ և է իսկ սակաւին. կենդանի զօրութիւն մը, որ քրիստոնէական հաւատքին բարոյականովը միշտ արթուն պահեց ժողովուրդին հոգին՝ այն բոլոր դժուարութիւններուն և դժբախտութեանց մէջ, որոնք այս կամ այն կերպով ու չափով խուժեցին իր վրայ ամէն կողմէ, իր գոյութեան ամբողջ ընթացքին: Ուրիշ կարգ մը ոչ նուազ կարևոր և նուիրական ոյժերու, որոնք նոյնպէս ազգին ներքին կեանքին պահպանակներն էին, ինքը միշտ գործակից ու ներշնչող, անոնց ընդհատաբար կամ ընդերկար չգոյութեան ատեն, իրաւ է թէ հարկաւորաբար կերպով մը, աւելի կամ նուազ յաշողութեամբ, ինք կատարեց անոնց ալ

դերը. հարկադրաբար, այսինքն անհրաժեշտ ստիպողականութեամբ և ո՛չ թէ իր բնիկ պաշտօնին կամ կոչումին բերումովը, որոնց՝ այսինքն իր բուն հոգեւոր նկարագրին ստնանած իսկ եղաւ այդ տեսակ մը զարտուղւոժովը. իսկ հիմակ որ, մեր հայրենի երկրէն արտաքոյ ևս՝ պարագաներու զգալի փոփոխութեան հետեանքով՝ Եկեղեցին աւելի ատակ պիտի նկատուէր համեմատաբար աւելի նուիրուելու իր իսկական դերին, կը քաշենք՝ կը բունադատենք զայն մտնել քաղաքականութեան մէջ՝ կամ զեօտին դառնալ մեր ներքին քաղաքական խաղարկութեանց: Ու հոս է արդարև ազէտքը, բուն վ՛լ՛բըն ազգին հոգին:

Մանրամանութեանց առջև մի առ մի կենտրոն պէտք չկայ, բաւական լինի յիշել միայն թէ սա վերջին տարիներուս, մօտաւոր կամ հեռավոր երկիրներու մէջ՝ մեր դէմ նիւթուած տեսակ մը հալածանքի կազմակերպումը՝ նուազագոյն չափով մը զէթ՝ հետեանքն է մեր ազգային բարոյական ոյժերը քաղաքական գործօններու վերածելու անխորհուրդ այն մտայնութեան, որ անա մինչև նոք աշխարհի հեռաւոր ծայրերը սկսած է ծաւալ գտնել. իսկ ամերիկահայ կնիճիոն մէջ, սկզբնական վայրկեանէն մինչև վերջնականը, այդ մտայնութեան՝ անտարակուսելիօրէն: — Քաղաքականութեան հակառակ չենք. կ'ընդունինք թէ իր ազգային ինքնութեան դիտակցութիւնը, իր անցեալին յուշքը և ապագային մտանկեռումը ունեցող ժողովուրդ մը, մենք կամ մենէ աւելի խոնարհագոյն աստիճանի վրայ գտնուող մը, չի կրնար չունենալ իր ոյժերուն և հնարաւորութիւններուն հետ համեմատական քաղաքականութիւն մը: Կարելի չէ և ոչ ալ ներելի՝ սպասել և ցանկալ նոյն իսկ որ մեր ազգային կամ հասարակական կեանքի մէջ՝ զադրին ցամբին հոսանքային խմորումներ ու շարժումները. ատիկա մեծելական բան մը պիտի ըլլար մեր ընկերային և նոյն իսկ ազգային գոյութեան համար. բայց կարելի է և կարևոր որ անոնք խմորին ու խոնուին Եկեղեցիին շուրջը՝ ո՛չ թէ ծծելու համար զայն բարոյապէս և նիւթապէս, ո՛չ թէ օգտագործելու համար անոր կարգ մը անվիճելի առաւելութիւնները, որոնք դեռ կը մնան բարեբախտաբար, այլ իրենց համակրութեամբը և ակնկրութեամբը օգնելու համար իրեն՝ որ կարենայ աւելի կազդուրել ինչ որ ազնիւ է ու բնիկ իր մէջ, և ինչ որ զինքը աւելի սերտ կցորդութեան մը մէջ կը պահէ իր հոգևոր նկարագրին բարոյական էութեանը հետ:

Իայց այդ ընելու համար պէտք էր որ ընդունուած ըլլար թէ Եկեղեցին, քաղաքականութեան մեծ ու փոքրիկ այդ նկատումներէն դուրս բռնուած և գուտ իր կոչումին ծառայած ատեն իսկ, շատ աւելի ծառայած կ'ըլլայ՝ իբրև ազգային մեծ գործօն մը, լինելով, ինչպէս է արդարև, ազգային կեանքի իրականութեան ամենէն պինդ խարխիսը, պահպանակ ամրութեան՝ որուն կանչած մնաց Հայութիւնը իր պատմութեան ամենէն փոթորկուտ շրջաններուն:

Այս հասկցողութեան պակասին հետեանքն է որ կրեցինք ու կը կրենք դեռ ամէն օր իբր ազգ և ժողովուրդ. ու ամերիկահայ հարցին և անոր ելոյթին մեզի տուած տպաւորութիւնը, այժմ արդէն համոզումի փոխուած մեր մէջ, այդ է դժբախտաբար . . . :

\* \* \*



# ԿՐՕՆԱԿԱՆ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ (ՄԱՂԱՋԱՐԴԻ ԿԻՐԱԿԻ) (ՓԻԼԻՊՊ. Գ. Ց-ՁՕ)

Կարելի է ոչ թէ էջի մը վրայ՝ այլ ստուարագոյն հատորի մը մէջ իսկ ամփոփել մէկ ծայրն անգամ այն մեծ տեսարանին, որ կեանքի վերածուած քրիստոնէական բարոյականն է: Բայց ինչ որ Առաքեալը կը ներկայացնէ մեզի իբր այդ՝ այս հատուածին միայն առաջին երկու համարներուն մէջ, թէև մանրադիտական նկատուելու չափ փոքրիկ, այնքան հոգւով է գրծուած, ա՛յնքան ազդու է և զեղեցիկ, որ անկարելի է չգրաւուրի անով:

Առաքինութիւններու դասաւորուած ցանկ մը պիտի չգտնէք զուք հոն. ո՛չ ալ վերլուծական զննութիւններէ դուրս բերուած եզրակացութիւններ. զի դաս մը չէ որ կ'ուզէ աւանդել անոնց՝ որոնց կ'ուզէ իր այդ տողերը, այլ անձնական փորձառութենէ հանուած քանի մը ցուցուցներ միայն, սիրտն սիրտ փոխանցուած տաք խօսքեր, որոնք, ա՛յնքան աւելի շինիչ կ'ըլլան, որքան աւելի ըսողն ու լսողը հոգեխառնուած են արդէն իրարու հետ: Իր զիտուածն է հասկցնել պարզապէս թէ ի՛նչպէս պէտք է ապրի քրիստոնէան՝ ձևաւորարանի արժանի ընթացք մը՝ ունեցած ըլլալու համար. այս պատճառաւ կը բաւականանայ անոնց տալով յորդորական պատուէրներ միայն, զորք այնուչառ կը նկատուի կատարելութեան տանող ամենէն էական սկզբունքներէն, և որոնք հետեւեալներն են: — Սիրել ճշմարտութիւնը. սեղմօրէն իմացաբանական առումով չէ, սակայն, որ կը գործածէ ան հոս այդ բառը. ո՛րքան բանականութեան՝ նոյնքան է մանաւանդ սիրով՝ անկիւնէն է որ կը զիտէ զայն. ճշմարտութիւն՝ ո՛չ լոկ մտածումին, այլ նաև խօսքին և վարմունքին մէջ. այսինքն ուղղամիտ, անկեղծ և ճշդ: Միտքն ու սիրտը պէտք է համընթաց ըլլան կեանքին մէջ: Իմացական շնորհները ոչինչ չ'արժեն, եթէ չեն կրնար բարոյականի վերածուիլ:

Իսկ այդ կերպով իրականացած բարո-

յականին պտուղն է պարկեշտութեան սէրը: Սեռական մաքրաբարոյութեան հասարակ իմաստովը չէ սակայն որ այդ բառը գրուած է հոտ. պարկեշտը՝ իսկապէս՝ չիտակ նկարագիր ունեցող մարդն է. նա՛՛ որ իր համոզումները չի պահեր. ճշմո՛ւ նկատուաներու, անձնականութեան մէջ չի խեղդեր սկզբունքները, թոյլ չի տար որ իր զիմացիներն վրայ նշմարուած իրական թեւադրութեանց ստուերին ներքև աղօտանան նոյնքան իրական առաւելութիւնները անոր. իր թշնամիին վրայ նոյն իսկ չ'անտեսեր առաքինութիւններ, և անոնցմէ զընահատելով ինչ որ պատուական է արդարև, ինքզինքը նոյն իսկ արժանի կը կացուցանէ ամենուն անծարանքին:

Վարուելով այդպէս, քրիստոնեան գործադրած կ'ըլլայ պարտուց և իրաւանց գերագոյն կանոնը, որ արգարութիւնն է ինքնին, այդ բառին լայնագոյն իմացուածովը: Իսկ ա՛յնքան աւելի սրտանց և բարձրագոյն չափով կատարած կ'ըլլանք այդ արգարութիւնը, որքան հետամուտ ըլլանք Աստուծոյ և մարդոց հանգէպ մեր ունեցած պարտականութեանց աւելի՛ քան իրաւունքներուն: Չ'արժեր այսքան, այնքան մտահոգուիլ այս վերջիններով, զի անոնց ճամբան է արդէն որ կը հարթեն միշտ իրագործուած պարտականութիւնները:

Եւ որովհետև մաքուր հոգիէն է որ կը ծնի միշտ մաքուր կեանքը, հոգեկան այդպիսի շնորհներով զարգարուած անձին համար գաղտնիք մը չուրեմնար այլևս սրբութիւնը, ա՛յս բառին ևս կենցաղական և ամենէն լայն նշանակութեամբը: Այսինքն թէ ճշմարիտ քրիստոնեան մաքուր մարդ պէտք է ըլլայ ամէն տեսակէտով. մաքուր՝ իր ապրումներուն, իր խոկումներուն, իր ձգտումներուն, իր յարաբերութիւններուն, իր նպատակներուն, իր միջոցներուն մէջ, և իր կեանքի բոլոր ուղղութիւններուն վրայ: Երբ այս հոգւով է որ կը տոգորուի քրիստոնէական համայնքի մը կեանքը, հոն փոխադարձ սէրը, այսինքն միմեանց նուկատամբ սիրալիք վերաբերմունքն ու վրաստահութիւնը, այնքան կենդանի զօրութիւն մը կը դառնայ որ մարդիկ, որքան իրենց անձին նոյնքան և իրենց ընկերային իրական պատուունչն ու համբաւին համար աննեղ նախանձախնդրութեամբ միայն կը

լնցուին, և ջոնաղիր կ'ըլլան անհատապէս և հաւաքաբար զովելի հանդիսանալ բարոյականութեան տեսակէտով, ու ըստ այնմ ուղղութիւն կուտան իրենց բարքերուն:

Այս կերպով է որ քրիստոնէական կեանքը սկիզբէն կրցած է ոչ միայն պաշտպանել իր զոյութիւնը, զինքը շըջպատտող յոռի ազգեցութեանց դէմ, այլ նաև հետզհետէ առաւելագոյն չափերու հասցնել հոգեկան նուածումի իր գործը, երկրի վրայ կատարած բարոյական մեծագոյն աշխարհակալութիւնը. որուն նմանը այլուր չէ արձանագրած ցարդ պատմութիւնը: Նոյն այդ կերպով է որ քրիստոնէայ ժողովուրդներու մէջ դեռ կը շարունակուի, անոնց ապրած կրօնական կեանքին անկեղծութեան հետ ուղիղ համեմատութեամբ անշուշտ, բարոյական ուժեղացումի և քաղաքակրթական յառաջդիմութեան գործը՝ ի պատիւ Աւետարանի գաղափարին:

Ու այս գործը պիտի կատարուի հակառակ երբեմն իր յամր գնացքին, այնքան ապահով եւ վճռական կերպով, որքան այդ ժողովուրդները կրնան ապրեցնել իրենց մէջ ինչ որ իրենց կրօնքը ուսուցած է իրենց և կ'ուսուցանէ տակաւին, ինչ որ կրցած են պահել, ինչ որ այդ կրօնքին անմահ առաջնորդներէն ընդունած են և լըսած, և տեսած ու հաստատած անոնց գործունէութեան արդիւնքներուն մէջ: — Աստոր մէջ է քրիստոնէական կատարելութեան գաղտնիքը. կեանքը երջանկութեան կը վերածուի, այսինքն երկինք թագաւորութիւնը կ'իրականանայ երկրի վրայ՝ այն ատեն միայն, երբ Աստուծոյ գաղափարը մարդուն և մարդկութեան մէջ կրնայ ծնիլ խաղաղութիւն:

Թ. Ե. Կ.

**ՅԱՐՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ**  
(ՋԱՍԻԿ ԿՐԹԱԿ) (Գործք Ա. 15-26)

Գեղեցիկ է ժամատապական այս կարգադրութիւնը, որ կը տնօրինէ Զատիկի Ս. Պատարագին իբր ճաշու առաքելական ընթերցում կարգալ Գործք Առաքելոցի այս Ա. 15-26 հատուածը:

Այդ հատուածը, սրտագրաւ նկար, որուն մէջ կը տեսագրուի Գրիստոսի իր եր-

կրաւոր հօտէն խաղաղ բաժանումի վաղորդայնին իով՝ այս վերջինին մէջ սկսած հոգեւոր կեանքի եուզիւքը, կը պարունակէ երկու բաժիններ: Անոնցմէ առաջինն է Յուդայի անկումի պաշտօնական հրատարակումը առաքելական խումբի երիցացոյնին կողմէ. իսկ երկրորդը՝ այս խումբին մէջ անոր տեղ յաջորդ մը կարգելու հարկին նկատառումը: Առաջինը տխուր պատկեր մըն է, մայլ՝ յուշերովը կարածնաւազակերտին, որուն մտածումը առաջին վայրկեանէն սկսեք էր լլկել մմէնուն սիրտը, և պակուցիչ՝ անոր իրեն համար նախասահմանուած ահաւոր վախճանովը, որ Ակեղոյմայի մահաշուքի տպաւորութեամբ պիտի յաւերժանար՝ դարէ դար՝ քրիստոնէական զգացողութեան մէջ, մինչև այսօր:

Իսկ երկրորդը բարձրօրէն ոգեւորիչ հանդէսն է սեռն և սերտ գիտակցութեանը նկեղեցւոյ առաջին հասարակութեան, որ իր հիմնադրին մահէն անմիջապէս ետքը ամենչև փճուական քայլը կ'առնէ անոր գործը շարունակելու իր որոշողութեան մէջ:

Ան առաջադրած է որ շէնքը բարձրանայ արդէն դրուած հիմունքին վրայ՝ պէտք է անփոփոխ մնայ առաջին գործիչներուն նախակարգուած թիւը, երկտասանը. ուստի պէտք է նոր մը ընտրուի անկաւելին տեղը: Իսկ այս գնահատմանութեանն աւելի՛ այդ առաջին ժամալիման միջոցին կարեւոր եւ էական նկատուածն է այս սկզբունքը թէ ընտրելու պէտք է անոնցմէ լինի որոնք սկիզբէն հետեւած են Յիսուսի, Յովհաննու մկրտութեանն մինչև անոր համբարձումը. և այս՝ որպէսզի կարենայ ան ալ, միւսներուն պէս վկայել Փրկչին յարութեանը մասին: Հասարակաց այս զգացման և հանրալին այս գաղափարին է որ թարգման կը կանգնի Պետրոս, որ ընտրութեան ձեռնարկուելէ առաջ այս պայմանը կը բանաձևէ յստակ և պարզ բառերով:

Ուրեմն այս տեսութիւնը զոր մտքով ջրան դարերու ընթացքին բոլոր քրիստոնէայ սերունդներն ու գաղոցները իբարու փոխանցելու անալյայլ նոյնութեամբ, մինչև իսկպէս մեր հաւատքին բիւրեղացած այն սկզբունքներէն, որուն՝ առաջին բուպէէն անդրադարձաւ եկեղեցին, և զոր հիւսելով իր դաւանանքին մէջ, սկիզբէն իսկ նկատեց զայն հիմնաքարը իր վարդա-

պետութեանց կառուցուածքին: Ասոր համար չէ՞ր միթէ որ Պօղոս, Աւետարանի ամենամեծ տարածիչը, յարուցեալ Փրկիչը հոգւով իրապէս տեսնելէն վերջ միայն հաւատաց իր առաքելական կոչումին, այնպիսի հոգեւանդն համոզումով որ յետոյ պիտի ըսել տար իրեն «Եթէ Գրիստոս յարութիւն չէ առած՝ ընդունայն է մարդոց հաւատալը և իրենց քարոզելը»:

Գրիստոսի յարութեան հաւատքը խաբիսին է արգարե քրիստոնէական կեանքին, որ առանց անոր՝ պիտի նմանէր խութեբուռ և խարակնբու միջև արտաբերուող նաւի մը, ամէն վայրկեան ենթակայ խորտակուելու անխնայ: Աւելի կարեւոր և կենսական պիտի ըլլար սակայն շեշտել հոս, այս բնագրին ներքև, թէ անիկա՝ այդ հաւատքը՝ առանցքն է քրիստոնէական քարոսութեան և հիմնապայմանը հոգեւորական աստիճանի արժանեաց: Ով որ, կրօնաւորական ասպարէզի վարիչ կամ մշակ, գրչի վաստակաւոր կամ բեմական գործիչ, որ յանձն է առած իր կարողութիւնները գնել ի սպաս Աւետարանի բարոյականին, բայց չունի Գրիստոսի յարութեան մասին հարկաւոր անկեղծ հաւատքը, չի կրնար լրիւ և արդիւնաւորապէս կատարել իր պաշտօնը: — Գիտեցէք, սակայն, թէ բաւական չէ լսել կամ խօսիլ լոկ այդ մասին, ասպոցոյցնքը գասաւորել գիտնորէն ու ձառել ոգևորուած հետադարձութեամբ. ո՛չ թէ քարոզելն է հարկաւոր, այլ վկայ լինիլ, խօսիլ՝ ոչ թէ արուեստով, այլ կեանքով: Վկայել՝ կը նշանակէ ականատեքի համոզումով և հաւատարմութեամբ արտայայտուիլ: Աւետարանի պաշտօնեան պէտք է ամէն վայրկեան իր շուրջն ու հոգւոյն մէջ կենդանի տեսնէ զԳրիստոս, անոր հետ միայն յարաբերութեան մէջ զգայ միշտ ինքզինքը, ընդունի թէ ամէն ինչ որ իբրև յառաջմտութիւն և զէպի լաւագոյնը յեղաշրջութիւն կ'իրականանայ քրիստոնէական կեանքին մէջ՝ անկէ միայն կ'ընդունի իր ոյժն ու շարժումը, և թէ վերջապէս չէ մտած ան, ոչ միայն իբրև գապիտար՝ որուն շէ կրնար մտեանալ մահը, այլ նաև իբրև անձնաւորութիւն, որ կ'ապրի, կը գործէ և կ'ապրեցնէ մանաւանդ զայն իր մէջ:

Ճշմարիտ հոգեւորական գործիչը նա՛մ է

որ կ'ապրի և կը գործէ ա՛յդ ոգւով և այդպիսի գիտակցութեամբ, և որուն քարոզութիւնները ա՛յդպիսի հսկայիճակէ մը միշտ կը ստանան իրենց ներշնչումը: Իսկ ո՛րքան անկեղծ ու խորունկ ըլլայ այդ ներշնչումը, այնքան մեծ և փառաւոր կ'ըլլայ յաջողութիւնը, որ ուշ կամ կանուխ անվրէպ կը պտակէ այդպիսի զգացմամբ ոգևորուած վանքերը: Եկեղեցւոյ պատմութիւնը և քրիստոնէական կեանքի սուօրեայ փորձառութիւնն իսկ կը ցուցնեն թէ ամէն բարի արգիւնք որ ձեռք բերուած է Աւետարանի դաշտին մշակութեան մէջ՝ գործը եղած է աւելի այդպիսինբու, այսինքն անոնց որ խօսքէ աւելի հոգւով և կեանքով քարոզած են:

Գրիստոսի յարութիւնը քրիստոնէական կրօնքին «կեղերանական ճշմարտութիւնն է», անոնք որ հոգեկան ներքին փորձառութեամբ, այսինքն իբրև ամէն օր իրենց մէջ կատարուած եղիլութեան մը իրազգած յայտնաբերութեամբ կրնան վկայել անոր մասին, առաքելական արժանիքի՛ է որ կը տիրանան իրօք և իրաւամբ:

Թ. Ե. Գ.

ԵՐԱՎՇՏՈՒԹԻՒՆ ԷՆ ԶՐԷՅ ՍՕՏ

Ս. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱՎՇՏՈՒԹԻՒՆ

Ինչպէս Եգիպտոսի ու Ասորեստանի և արդի արեւելեան ժողովուրդներու մէջ, շրէից մէջ ալ երաժշտութիւնը գրեթէ անբարձան էր կեանքէն: Սակն տօն իրեն յատուկ երգը ուներ. « Անոնց ամուսկները թմբուկով ու քնարով ձայն կը բարձրացընեն ու սրինգի ձայնով ուրախ կ'ըլլան » (Յոր Իւկ. 12): Երբոր Աստուած իր ժողովուրդը իր հայրերուն երկիրը ասնի՛ « այն ատեն կոյսը պար բանելով պիտի ուրախանայ, երիտասարդներն ու ծերերն ալ միասին» (Երեմ. Ա. 13): Երաժշտութիւնը լրսելի կ'ըլլայ հարսանեական թափօրներու մէջ, և որ փեսան փեսաէջններով ու իր եղբայրներով միասին կը յառաջանայ՝ փողերու և թմբուկներու և պէս պէս երաժշտական գործիքներու ձայնով» (Ա. Մակ. Թ. 39): Արիւսողով մարդիկ կը զրկէ Իսրայէլի ամէն ցե-

զերուռն ու կը պատուիրէ անոնց. «Փողին ձայնը լսի՛նուզ պէս՝ ըսէ՛ք. Արիսողոմ թափաւոր եղաւ Քերբորնի մէջ» (Բ. Թագ. ԺԵ. 10): Գեհեոնի աղբիւրին քով, Սողոմոնի թագաւոր օծուելէն վերջ, եղջերափողերը կը հնչեն ու ժողովուրդը սրինգի ձայնով կը պարէ (Գ. Թագ. Ա. 39-11): Փողիք կը հնչեն նաև Յէուի թագաւոր օծուելու ժամանակ (Գ. Թագ. Թ. 13): Ուրարտիթեան և ցնծութեան ձայներով կ'աշխատին հրնձողները (Ստայի ԺԶ. 10): Նքրայեցիք երբ անապատին մէջ ջրհոր մը փորեն՝ կ'երգին. «Ո՛վ ջրհոր, բղխէ՛. երկեցէ՛ք անոր. Այս ջրհորը Օրէնսգիրին հրամանով իշխաններն ու ժողովուրդին աշխատակները փորեցին ու զայն փրենց զաւազաններովը բացին» (Թիւք ԻԱ. 17-18): Եղիսէ նուազածու մը կ'ընկերացնէ իրեն՝ երբ կը մարգարէանայ ի նպատակ Խորայէի Գովրամ և Յուզայի Յովապատ Թագաւորներուն (Գ. Թագ. Գ. 15 և յավորգները): Նոյնպէս Սաուու զնարով նուազել կու տար Դաւիթին ամէն անգամ՝ երբ տանջէր զինք չար ոգին (Ա. Թագ. ԺԶ. 17, 23): Ամոլմս արտաբերէ կը նկարագրէ հորուստները, մորք գտաւորի ձայնով խաղ կը կանչեն ու Դաւիթի նման երաժշտական գործիքներ կը հնարեն» (Ամոլմ Զ. 5): Ստայի նոյնպէս կը նկարագրէ խնձոցները, ուր զինի կը խմեն «քնարի ու տաւիղի, թմբուկի ու սրինգի երգիքով» (Ստ. Ե. 12): Վերջապէս երաժշտութիւնը կարեւոր տեղ մը կը վրաւէր սուգի և յուզարկաւորութեանց ատեն: Դաւիթ լսելով Սաուուի ու Յովաթանի մանր՝ անոնց վրայ ողբ մը յորինեց ու պատուիրեց որ Յուզայի որդիներուն ալ սորվեցնեն զայն (Բ. Թագ. Ա. 17-18):

**Բ. ԿՐՈՆԱԿԱՆ ԵՐԱՓՇՏՈՒԹԻՒՆԸ**

Մովսէսի հրամանով ծխական երաժշտութեան յատուկ արծաթէ կաճոյ փողեր շինուեցան, որոնց միջոցաւ քահանաները պարտաւոր էին գումարել ժողովուրդը ու ծանուցանել տօները: Քահանաները պարտաւոր էին նաև հնչեցնել զանոնք ծխական զոհերու և պատերազմներու ժամանակ (Թիւք Ժ. 2-10):

Դաւիթ երգիչները քսանընդս զստի բաժնեց (Ա. Մնաց. ԻԵ. 6-31), ու Դևտացիներուն համար մեծ թիւով երաժշտական

գործիքներ շինել տուաւ. «Թո՛ղ չորս հազարը օրհնելու համար շինած նուագարաններովս օրհնաբանողներն ըլլան Տիրոջ» (Ա. Մնաց. ԻԳ. 5): Այդ նուագարաններն էին տաւիղ, զնար ու ծնծղայ (Ա. Մնաց. ԻԵ. 1, 6): Նրկու հարիւր ութսունը Պետացիներ կային՝ որոնք այս ծխական գործիքներով կ'երգէին ու կը նուագէին (Ա. Մնաց. ԻԵ. 7): Ըստ Յովսէփոսի՝ Դաւիթ անձամբ հոգ տարաւ նուագածուներու խումբը կազմակերպելու (Հնար. Է. Գիրք ԺԲ. 3): Սուղոմոն քնարներ ու տաւիղներ շինել տուաւ նոճէփայտէ, զոր իր նաւատորմը բերած էր Ոփիրէն (Բ. Մնաց. Թ. 11):

**Գ. ԵՐԱՅԱՍԿԱՆ ԵՐԱՓՇՏՈՒԹԻՒՆ և ՆԱՐԱԳԻՐԸ**

Այս կէտը մութ մնացած է գրեթէ: Ի՛նչպէս կ'ենթադրուի քանի մը լուսաբանութիւններ կու տան այս մասին՝ թէ՛ և խիտ վերապահութեամբ:

1. Նքրայեցիք չունէին իրենց յատուկ ու ե իրաժշտական գրութիւն: Արևելեան արուեստն էր արբարպետող իրենց երաժշտութեան մէջ. միւս կողմէ, սակայն, սեւական երաժշտութիւնը չէ թողած ոչ մէկ գործ, զոնէ մասնակի, որուն վրայ կարելի ըլլար որոշ տեսութիւն մը կ'իմեել:

2. Անոնց մէջ երաժշտական արուեստը սկստւ լարաւոր գործիքներով, որոնց զաշխուտումը մայնական զանազան ստիւնաներ կ'արտադրէր: Մինչև մեր օրերը հասած եզրպատական հին սրինգները, որոնց քառասուն տեսակները ծանօթ են, շատ քիչ ճշդութեամբ շինուած էին:

3. Արևելեան երաժշտութեան մէջ ձայնաստիճանի ամէն մէկ ձայնանիշը կրնայ իրրև հիմնական ձայն (tonique) և կամ իրրև վերջին զադարի ձայնանիշ ծառայել, ինչ որ շատ մը եղանակներու ծնունդ կու տայ, որոնց մեծամասնութիւնը նրբին ու մեկամաղձոտ երգեր են:

4. Նքրայական երաժշտութեան մէջ անծանօթ են մեներգն ու կըսոյթը:

5. Անոնք թերևս տաղաչափութեանց վերջին վանկին կու տային եղանակաւորում մը, որ կը բաղկանար շատ մը ձայնական իւնէջներէ:

6. Ընթերցման եղանակը կամ զրուցերը կը տարբերէր յօրինուած երգերէն: Ընթերցման յատուկ եղանակը պահուած է տակա-

ւին սինակոններու մէջ ու կը նմանի արեւելեան զանազան եկեղեցիներու ինչպէս նաև Գուրանի ընթերցումներու սինակոնին: Իսկ Սուրբ Գրոց բնագործ տաղաչափն աւսերու ընթերցումը արդէն յորինուած երգերու ընդթեր ունէր:

**Գ. ԵՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ**

Նախնի Արեւելքցիները ունէին լաւաւոր գործիքներ, զորս կ'ածէին կամ մատերու սեղմուժով և կամ լարերու վրայ հարուածներ տալով: Ունէին նաև փշելու գործիքներ և հաւողական կամ զարնելու գործիքներ: Որովհետև ո՛չ եգիպտական և ոչ ստորական յիշատակարաններու վրայ չ'երեւիր ձպտը, ատէկ կարելի է հետևենք՝ թէ Երբայեցիք չէին զորածներ զայն:

1. Լարաւոր գործիքներ. — Երբայեցուց ըով ասոնց ամէնքը կը պատկանէին տաւրի ընտանիքին: Մինչոց Գիրքը (Գ. 21) կը խօսի կիների մասին ու Ղամեքը որդին Յորաղը կը համարի հայր ըլլոր քնարահարներուն և սրնգահարներուն: Յետոյ Սուրբ Գիրքը կը յիշատակէ նեբելը, որ կը նշանակէ սիկ. կը կարծուի թէ հնչականութիւն արտադրող ուսուցիչ գործիք մըն էր ան: Վերջապէս Ս. Գիրքը կը յիշատակէ ատօրը կամ տասնաղի տաւիղը (Սաղմ. ԼԳ. 2) ու տեվիմիքը, որ ութ լարով տաւիղ մըն էր թերևս (Ա. Մնաց. ԺԵ. 20): Ետքէն ծանօթացան սամպիւրին (sambouque), որ շատ սուր ձայն մը կը հանէ, նաև օսալիլին ու քնարին: Ասոնք երեքն ալ յիշուած են Դանիէլի Գիրքին մէջ (Գ. 5): Քնարը ներկայացուած է հրէական դրամներու վրայ՝ մեր թուականի Առաջին դարուն:

Լարիքը կը շինուէին ոչ թէ մետաղէ՝ այլ կենդանեաց աղիքներէ: Սկիզբները անոնց կը նպէտէն ձեռքով, ետքէն սկսան զորածակ կանոցը:

2. Փշելու գործիքներ. — ա. Փող. — Հնազոյն ժամանակները անիկ կը շինուէր կենդանիներու եզրուրներէն. ատէկ առած է իր անունը՝ քերեկ ( = եզրուր ), Լայնաբերան մետաղեայ փող մըն ալ կար՝ դրօշի ձևով:

բ. Մրինգ և բարձրաւորինգ (hautbois). — Դանիէլի Գիրքին symphonia արժման Արարներու տկարիւնքն կամ հովուասրինգն է թերևս, որ տակաւին մինչև հիւսս սամպոնա կը կոչուի Սիւրբացուց ուսմական

բարբառին մէջ: Եգիպտացիք ձայն կողմը կը տանէին սրինգը, այդ պատճառաւ կ'ածէին աջ ձեռքով, մինչ այսօր կ'ածեն թէ՛ աջով՝ թէ՛ ձախով:

3. Հատողական գործիքներ. — Սյս շարքին տեսակներն են՝ թմրիկը (չինուած փայտէ կամ հողէ կամ մետաղէ), ծնծղան, բամբուր, զանգակիկներ, բոժոժներ, ճօճակ, ևայլն:

**Ե. ՆՈՒԱԳԱՐԱՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՄՈՒԹԻՒՆԸ**

Յիշատակարաններու ուսումնասիրութիւնը այն կարծիքը կու տայ՝ թէ տաւղահարներն ու սրնգահարները պէտք է արագ նօթերով երգէին: Նուագարաններու պէսպիսութիւնը ոչ թէ՛ նոյն իսկ տարրական ներդաշնակութիւն առաջ բերելու՝ այլ տարբեր ձայները ամփոփելու սահմանուած էր: Գործիքները այր մարդոց և կանանց կամ տղայոց ձայներուն ոյժ կու տային՝ առաջնորդելով երգեցողութեանց և ցոյց տալով եղանակին կշռոյթը: Սյդ եղանակներուն մէջ կային թերևս երաժշտական գեղգեղանքներու քանի մը նշոյլներ՝ աւելի կամ նուագ քմայական ու աւելի կամ նուագ ունակական:

Եթէ հաւատ ընծայենք Երրորդ դարու հեղինակ Կղեմէս Աղեքսանդրացիին՝ երբայական երգերը կանոնաւոր էին ու կշռութաւոր: Եւ սակայն մենք գիտենք Աստուածաշունչէն՝ թէ անոնք չափազանց խժալուր էին, մանաւանդ քանի մը հանդիսաւոր արարութեանց ատեն. «Եւ յարեան Դեւտացիքն... օրհնել զՏէր Աստուած ձայնիւ մեծաւ ի բարձուս» (Բ. Մնաց. Ի. 19): Ու արդէն Արեւելքցիները կը սիրեն բարձրաձայն նուագարանները և սուր խազերը, մանաւանդ վրէտ արտայայտելու պարագային:

Հաւանական է որ Արեւելքի սինակոնները տակաւին պահած ըլլան Հրեաներու ծիսական հին երգերէն մի քանի հետքեր: Չը մտնանք սակայն՝ թէ երաժշտութիւնը ինչպէս ճարտարագիտութիւնն ու լեզուէն, փոփոխութիւններ կը կրին ժամանակին հետ եւ թէ՛ հելլենական դարաշրջանին յոյն երաժշտութեան մուտքը պէտք է բարեփոխութիւններ մտցուցած ըլլայ երբայական հին եղանակներուն մէջ:

Հայացոց՝ Մ. Ս. Ն.,

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

«Զ Ա Ր Թ Ո Ւ Ց Ե Ա Լ Ք Ս»...

Շարուած են սասնեհինգը բեմիդ առջեւ, Տէր,  
Աշխարհէն դէպի լոյսը վազած կոյս սիրտեր,  
Անկրնդէ՛ս՝ խորանիդ կանթեղին մրտաւառ,  
Որ կարծես կ'աղօթէ իրենց հետ, իջած վար:

Գիտեր է դեռ. բայց երբ Չարթօնին երզը բամբ  
Կը ժայթէ բեմէն վեր յանկարծ, քաղցր ուժգնութեամբ,  
Դաւնակի մը հըսկայ՝ ստեղնաւար կուրծէն զերդ,  
Փայլակի շողիւնով սիրտէ սիրտ կ'անցնի սէրդ:

Կը սարսռայ վեհավայրը. նախնեաց ոգիներն  
Կ'արթըննան փունքերէն, գրմբէթին ծոցը, վերն,  
Հանչնալով մինչեւ հոն բարձրացող ձայնին մէջ՝  
Իրենցին դարաւոր գանգիւնները անէջ:

Ու սուրբերն, որմանկար քառերէն իրենց խիտ,  
Ա՛խ, կարծես թէ կ'ուղղեն նայումսին անբրթիթ,  
Ճրագներէ՛՜ անձնիւրիւն երբ բիբերն կը վառին,  
Դէպի շարժը անոնց, դէպի կողմը ձայնին:

«Չարթուցեալս»... Տէր, պահէ միտս այս տղաքը արթուն.  
Հաւաստուն ներքնյողը ելի՛ր միայն դուն.  
Չը մարի՛ կուրծքերնուն սակ սիրոյդ կրակն երբեք.  
Օ՛ր մը՝ բնաւ՝ չը նային փու Յոյսիդ սրտաբեկ:

Թ.

# Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

## Հ Ա Յ Ե Ր Է Ն « Լ Ո Ւ Ա Ր Ո Ւ Ք » Բ Ա Ռ Ը Տ Ե Լ Հ Է Մ Մ Ա Վ Է Պ Ի Ն Մ Է Ջ

M. Canard ուսումնասիրութիւն մը գրած է *Selkhemma* (Delhemma) վէպին վրայ (տե՛ս Byzantion, Հատ. Ժ., Պրակ Ա., 1935, էջ 284-300): Մեր վերնագրին լուսարանութեան համար անհրաժեշտաբար ստիպուած ենք քանի մը ծանօթագրութիւններ քաղել նոյն ուսումնասիրութիւնէն և ապա բացատրել մեր վերնագրին իմաստը, ըստ այն ձեռնհաս հեղինակին՝ որ պարզած է *Selkhemma* վէպին մէջ հայերէն «բարտոյ» բառին բացատրութիւնը: Արար-բիւզանդական պատերազմները շարունակուած են գրիթէ երեք դարեր, է. դարու վախճանէն մինչև Ժ. դարու վերջը: Այս պատերազմներու մէջ ներկայութիւն կ'ունենային կայսրը կամ նշանաւոր զօրապետ մը. խալիֆան կամ անոր որդին: Որքան կը մտտենային Ժ. դար, բազդին անիւը կը դառնար ինպատարիւզանդացւոց: Այս պարագան պատճառեցած էր Արարներու զանազան Պաղիկեաններու ակարացումով, որուն հետեանքով Արարները պաշտպանողական վիճակ մը ունէին: Բիւզանդացիք մինչև եփրատ յառաջացան յաղթական զնացքով, և հոն հաստատուեցան մինչև Սելճուքներու գալուստը:

Արարներու մօտ, այս երկար պայքարը ծնունդ տուած է մասնաւոր դիւցազներգութեան մը, արձակ մեծ վիպասանութիւն որ կը կոչուի «Խալիֆան պայքարողներուն մայր» էմիրա Տաթ էլ Հիմմայի, իր որդւոյն էմիր Ապտ էլ Վահայի, էմիր Ապու Մարամէտ էլ Պաթթայի, Օզպայի և Շուսմարիսի կեանքը»: Ան իբր արտոյտ կը կրէ, Արարներու, Օմմայեանց և Ապպասեանց խալիֆաներու մեծ պատմութիւնը: Այս վէպը Երկպտոսի մէջ համարէն կը կոչուի *Selkhemma*, դիւցազնուհի Տաթ էլ Հիմմայի (քաջասիրտ կինը) անուան ժողովրդային ձևը: Ասիկա վիպական երկար գործ մըն է, հիմնուած զանազան զրոյցներու և

քանի մը ոտոյք պատմական տարրամ ծանօթութիւններու վրայ (\*): Վէպը 863ին Արար-բիւզանդական պատերազմներուն մեծ պարտութեան մը թուականը կը յիշէ և իր ամբողջութեան մէջ կը ներկայացնէ առանել կամ նուազ զուտ զէպքերու ցուքը աւելի ուշ տարածուելով մինչև Սալայից թուականը, և թերևս աւելի հեռուն:

Տելէմմայի վէպը կը բաղկանայ երկու մասերէ, մին համեմատաբար համառօտ, տեսակ մը ներածութիւն է, միւսը աւելի երկար և կը հաստատէ բուն վէպը: Առաջինին մէջ ներկայացուած է Օմմայեանց թուականը: Վիպասանը կը պատմէ կեանքը էմիր Գիլպայիթ Շահաչի որ այլոց հետ արշաւանքներ կատարած է մինչև Կ. Պոլիս: Երկրորդին մէջ կը պատմուի Ապպասեանց թուականը:

Ուսումնասիրող յօդուածագիրը վէպին զլիսուոր նկարագիրը տայէ վերջ, նոյնին բովանդակութեան համառօտութիւնը կը պարզէ Արար-բիւզանդական պատերազմի զլիսուոր զրուագիներով:

Երկրորդ մասին մէջ, Ապպասեանները կը յիշատակէ թուելով մինչև Հարուն էլ Բաշիտ առաջին խալիֆաները, յաջորդաբար կը նկարագրէ խալիֆաներ՝ Հարուն էլ Բաշիտ, Մամուն, Մոթասիմ, Վաթիք, և ապա վէպին եզրակացութիւնը: Յօդուածագիրը զետուի կը յարէ թէ այս վէպին մէջ կը գտնուի զանազան մը տուիքներու և իրողութեանց, յատուկ անուններու և ֆոնդարական նիւթերու՝ զանազան հորիզոններէ բարդուած և շփոթուած են և յաճախ դժուար է անոնց յստակութիւնը: Այս պարագան դիւցազներգութեանց յատուկ է: Սակայն հոս, կարելի է հակիլ հաստատուն հիման մը որուն վրայ յառաջդիմութիւն վէպը հիմնուած է, ինչպէս որ այժմ կը գտնուի, և որ բուն Արար-բիւզանդական պատերազմի բազմաթիւ զրուագիներով հաստատուած է: Այս զրուագիներն են որ իրենց լայն գիծերուն և իրենց զլիսուոր մանրամասնութիւններուն մէջ մեկնաբանութիւնը յարաբերաբար աւելի դիւրին պիտի ըլլայ:

M. Canard յետագայ յօդուածի մը մէջ հակիրճ կերպով պիտի փորձէ գայն:

(\* ) Վէպը կը բաղկանայ, 1900ի Գահրիէի տպագրութեան մէջ, եօթն հատորներէ, 5084 էջերով:

Այժմ բացատրենք հայերէն աշխարհագրական բացատրութիւնը: Ինչպէս վերնազանգէն յայտնի է, աշխարհը բազմիցս գործածուած է Տիւրէմա վէպին մէջ. և վիպագիրը քաղած է Արաբ-բիւզանդական պատերազմներուն տոթիւ, հրը յաղթական արաբական բանակները կը կոտորէին բիւզանդացի զինուորները:

Մենք աշխարհք բառին բացատրութիւնը քաղած ենք Փրանսերէն «Byzantion» էն, որ բիւզանդական ուսումնասիրութեանց միջազգային Հանդէս մըն է, և կը հրատարակուի Պրոքսէլի մէջ. այս Հանդէսը հիմնադրուած է 1924ին և մինչև հիմակ կը շարունակուի: հիմնադիրներն են Բրոֆ. Հենրի կրէկօսը և Բօլ կրէնտօր, այս հիմնարկութիւնը վարդացած է Պելճիքական և Յունական կառավարութեանց եւ Պելճիքայի Համալսարանի քաջաշէրութեամբ: Այս Հանդէսը կը հրատարակուի տարին երկու անգամ, Ապրիլին և Հոկտեմբերին, կուտայ 800 էջոց Հատոր մը, բազմաթիւ պատկերներով: Այս Հանդէսին վարչութիւնը անցնել տարի Սոֆիայի մէջ ունեցաւ միջազգային Համաժողով մը բիւզանդական ուսանց համար և յառաջիկային ալ մտադիր է դարձեալ ունենալ Համաժողով մը Ռափնէնայի և Հոսովի մէջ: Այս Հանդէսին կը մասնակցին համաբաւոսք բիւզանդագէտներ, որոնց մին է քաջածանօթ և բազմահմուտ Անյ. Բրոֆ. Ն. Ադոնց, բիւզանդագէտը որուն հայագիտական արժէքաւոր յօդուածները մեծապէս գնահատուած են ընթերցողներէն(\*): Այս Հանդէսի մասին իմ մածօթութիւնս երկարեցի անոր օգտակարութիւնը նկատի առնելով եւ միւս կողմանէ մերագնէից ուշադրութեան յանձնելու համար զայն:

Այժմ պիտի տանք «աշխարհ» ին բացատրութիւնը զոր պիտի քաղենք Բրոֆ. Հենրի կրէկօսի յօդուածէն («Byzantion» Հատոր. Ժ. (1935), Պրակ Զ., էջ 665-67): Արաբ-բիւզանդական պատերազմներուն մէջ Հայոց զեբրին կարեւորութիւնը պէտք է չափազանցելու, Հայ և Հայախօս

տարրը բիւզանդական բանակին մէջ գերակշիռ եղած է, թ. գարէն մինչև Խաչակիրները, Դիպուածով չէ որ թուրքերը բիւզանդական կայսր, և կայսրը ներկայացնող բոլոր վերին զօրապետները քաղփոր կոչուած են. և ընու ըստ զիպաց չէ որ Խաչակիրները միևնոյն բառով կոչուած են բիւզանդական զինուորները որոնց հրամանատարն էր Տատիքիոսը: Այս բառին միջազգային ժողովրդականութիւնը, նման կայսր բառին, կ'ապացուցանէ թէ «բիւզանդական» զինուորները հայերէն կը խօսէին. վասն զի սնօգուտ է քաղփոր բառը ուրիշ բառի մը հետ փոփոխել, որովհետև այս երկու վանկերը ճիշդօրէն և պարզապէս հայերէն քաղաւոր բառը յառաջ կը բերեն:

Մենք կը հանդիպինք Տիւրէմա արական ժողովրդային գրքին մէջ բիւզանդական զինուորներու լեզունին վերաբերող բառի մը, և որ չի կրնար բացատրուիլ ո՛չ յունարէնով, ո՛չ արաբերէնով, ո՛չ թուրքերէնով, ո՛չ ասորերէնով. ապահովարար այս բառը մը միայն հայերէնով է որ կը բացատրուի:

M. Canard կուտայ թարգմանութիւնը ասպետական նշանաւոր վէպին քանի մը հատուածներու զոր միևնոյն բնագրին մէջ ճիշտ կը հանդիպի lwrk (لورق) աշխարհքը: Ահա հոս կը գտնենք Delhemmar վէպին մէջ նոյն բառին յիշատակուած սեղերը, զէպքերուն համառօտութեամբ:

«Թ. 76, 8. Ապուլու-Վահանպ և Պաթթալ կը յարձակին Կ. Պոլսի մէջ մասին վրայ. պատերազմը կը տևէ երեք օր. օչորբուրդ օրը, Յոյները կ'աղաղակեն յաւարտ, յաւարտ, այսինքն շնորհք, շնորհք (էլ-աման, էլ-աման). այն ժամանակ է միբը հրամայից կոտորածը զաղբեցնել»:

«Ժ. 6, 7. Գրաւուճն Կ. Պոլսի. էմիր Էօմէր Ուպտա Ալլահ Սիւլէյմնիու և Քիւլպանիու պարագլուխ կը յառաջնայ և կը կոտորէ քրիստոնէաները. «եւ Յոյները նոյն օրը կ'աղաղակեն, յաւարտ, յաւարտ, այսինքն էլ-աման, էլ-աման» (միակը ըլլալով յաւարտին լ գիրը հոս պով նշանակուած է)»:

«Ժ. 73, 23. Արշաւանք եօթն գերուցերուն, զբաւուած երկրորդ բերդին, սեբրդին բնակիչները կ'աղաղակէին յաւարտ, յաւարտ, այսինքն, էլ-աման, էլ-աման, էլ-աման»:

(\*) Բանասէր Ն. Ադոնց Բիւզանդիոնի Հայոց պատմութեան մասնագետ մին է, քսաի ուրիշ գործերով Մակեդոնացի կոչուած Պոպի Ա. Ի (867-886) կենսագրութիւնը՝ վերջնս գրի առած է՝ գիրք աւաստներով:

եւ էմիր Ազոտ էլ-Վահագ պանոնց կեանքը ազատեց»:

«ԺԳ. 19, 19. Գրաւուճն երրորդ բերդին: Տեղեւմտեան բերդը կը մտնէ և կը կոտորէ հոն ճակատները: Յոյները կ'ազազակեն, յուարոք, յուարոք, այսինքն, էլ-աման, էլ-աման, բայց Տեղեւմտեան շինողունց անոնց խնդրանքը, յարձակեցաւ անոնց վրայ և գլխատեց»:

«ԺԳ. 44, 17. Գրաւուճն չորրորդ բերդին: «Այն ժամանակ Յոյները գետին փռուեցան և միաձայն ազազակեցին, յուարոք, յուարոք, այսինքն, էլ-աման, էլ-աման»:

«ԺԳ. 79, 3. Գրաւուճն եօթներորդ բերդին: «Կոտորածը թէեւ մեծ եւ փոքր թշնամիներուն մէջ կը տարածուէր, բայց հարուածները փոխուեցան, և Յոյները կ'ազազակէին, յուարոք, յուարոք, այսինքն, էլ-աման, էլ-աման»:

«ԺԸ. 39, 13. Ֆրանկ թագաւորը՝ Պաթթալի օգնութեամբ նաւային յաղթութիւն մը կ'ունենայ իր թշնամիին վրայ, որ նոյն պէս Ֆրանկ մըն է Պաղովտոս անուն: Այս զեղջիջն զինուորները սեր տեսան թէ իրենցմէ շատերը սպաննուած են, ուժգնութեամբ կ'ազազակէին, յուարոք, յուարոք, այսինքն, էլ-աման, էլ-աման, և թողուցին զէնքերին»:

«ԻԳ. 60, 4. Լուլուայի գրաւումը, Պաթթալի և Տեղեւմտայի կողմէն: «Միջնաբերդին մէջ կային 1000 պատրիկներ: Տեղեւմտեան և իր ընկերները անոնցմէ շատերը կոտորեցին և արիւնը առատ կը հոսէր: Առաւօտուն, քաղաքին ժողովուրդը տեսաւ այս կոտորածը, կ'ազազակէր, յուարոք, յուարոք, այսինքն, էլ-աման, էլ-աման, և էմիրը դադրեցուց կոտորածը»:

«ԼԹ. 4, 2. Պաթթալի կողմէն Քարշանայի գրաւման գէպքը: «Օր մը և գիշեր մը մինչև առաւօտ կոտորածը շարունակուեցաւ: Ողջ մնացող Յոյները կ'ազազակէին, յուարոք, յուարոք, այսինքն, էլ-աման, էլ-աման և թողուցին իրենց զէնքերը»: (Միակ տեղը ուր յուարոքին ունի փոխուած: Լուարոք բառը յիշատակուած է նաև ՄԵ. 37, 6. ՄԹ. 37, 4. և այլն, և այլն):

Այս քանի մը օրինակները բաւական են ապացուցանելու թէ բացատրութեան իմաստը տարակուսական չէ: Ստուգիւ ան

համադր է, շնորհ և զթութիւն բառերուն. եթէ խնդրոյ նիւթ հղող հայերէն բայը կրնայ այս իմաստը ունենալ, տարակոյս չկայ թէ բառը հայերէն է, վասն զի ի զուր պիտի ըլլայ ու է ջանապարհութիւն զայն արարեանով բացատրելու համար: Այսպէս է Մ. Canard-ը ծանօթագրութիւնը: Դիտել պէտք է թէ յուարոք բառը ի հարկէ չնշանակիր բոլորովին միևնոյնը, այլ նաև «շնորհ»: Canard աւելցնելով իբր համանուն գրութիւն բառը, կը հաստատէ թէ կատարելապէս զիտէ թէ յաղթականին ուղղեալ կոչերը թէև ստուգաբանօրէն զանազան իմաստներ ունենան, բայց միաձայնութեամբ պարտաւշները կը հայցեն զթութիւն, շնորհ, և ներդաշնութիւն:

Դիտելի է նաև որ, ըստ կամս, զինուորները կը գործածեն օտար, բայց ընտանի բառ մը, որով կը թախանձեն թըշնամիին:

Պէտք չէ վարանիլ յուարոքը հայերէնով բացատրելու. նոյն իսկ եթէ հայերէն բառը՝ արարեան լարկ, ստուգաբանօրէն չունենայ զշնորհի իմաստը: Ապահովաբար լարկը յուարոքն է, այսպէս կ'արտասանուի՝ Լարուկ, սլոնցէք. լսելն բային հըրամայականին յոգնակի երկրորդ գէմքը (եզակին՝ յոտ)»:

Արդ բիւզանդական զինուորները շնորհ հայցելով կ'ազազակեն սլոնցէք մեզ», արդեօք բնական չէ՞: Ամէն ազազանք պէտք է սկսիլ այս հրամայականով: Յունական հնագոյն մատենագրութեան մէջ այս մասին կը գտնուի պարագայ մը, որ է Իլիադանի Ա. երգին մէջ Բրիսէս քուրմի մի ազօթքը. «Լուր ինձ, արծաթաղեղն, որ ըզԲրիսէ շուրջ պահպանես»: (տե՛ս, թրգմ. Հ. Ա. Բ., էջ 14):

ՄԿՐՏԻՉ ԱՐԲԵՊԻՍԿ. ԱՂԱՒԵՆՈՒՆԻ



# ԳՐԱԿԱՆ

## Պ. ՕՇԱԿԱՆԻ «ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻԻՆՆ ՈՒ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԱՆ»Ի ՎՐԱՅ

### Պ. ՄԻՔԱՅԷԼ ԿԻՐՂՃԵԱՆԻ ԲՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

#### ՄԱՏՈՒՅՈՒԱԾ ԱՌ ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՏԻԱՐԲ ՀԱՅՐԵ Ս. ԱԹՈՒՈՅՍ

#### ՆԱԽԱԳԻՒՆ ՍՐԻՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ - ԳՈՐԻՆԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ

Յ. Օշականի այս երկը, Վահան Թէքէանի գործին ու արուեստին նուիրուած, իբժաւարովը պատկանելի եւ որակաւիւր թանկարժէք՝ բազմամասն ու խլճամիտ ուսումնասիրութիւն մըն է, արժանի մեծանուն բանաստեղծին, եւ պատիւ բերող՝ հեղինակին:

Մեր գրականութեան մէջ ուր քննադատութիւնը սկիզբէն է իբր այնքան քիչ ու զէշ մը չաղուած սեռ մը եղած է, կարելի է ըսել որ Յ. Օշականի աշխատութիւնը, իբր համեմատութիւններով որքան իր ներքին (intrinsèque) արժէքով՝ եղական, աննախընթաց երևոյթ մըն է: Կարելի է, առանց սխալելու կամ չափազանցելու երկրիւղի, հաւաստել թէ ո՛չ մէկ արեւմտահայ մաստէնագիր առարկայ եղած է այսքան լիակատար, բազմակողմանի, այսքան հմտակց ու խորքային ուսումնասիրութեան մը: Մեծագոյն կոթողը զոր հայ քննադատ մը կանգնած ըլլայ հայ գրագէտի մը փառքին համար:

Ս. Օշականի քննադատական երկը զետեղուած է սիրոյ նշանակին (signe) ներքեւ, — այն սիրոյն որ խորունկ հասկացողութենէ մը կը բղխի կամ անոր կը տանի: Ակնբռն է թէ հեղինակը եթէ մտնարկած է Վ. Թէքէանի գործն ու արուեստը ուսումնասիրելու (սքանչելի՛ բառը), ասիկա ըրած է ո՛չ թէ զուտ առարկայական ծրագրով եւ հաւմաներով (թէն) կամ վարդապետական (dogmatique) առաջադրութիւններով (Գրիւնըթիւն), այսինքն երևոյթներ եւ օրէնքներ ուսումնասիրելու համար՝ տեսարանի (théoricien) մը նախանձախնդրութեամբ, այլ որովհետեւ սկզբնական համակրութիւն մը զինքը տարած կողմած է ա՛յդ գործին ու արուեստին: Ընտրել տուած է իրեն ա՛յդ քերթողը — ժամանակակից տաղանդներու խոյտարղէտ հոյիին մէջ — իբր ամենէն համապատասխանը բանաստեղծի մը մտատիպերին:

Ս. Օշականի երկը կ'առջ է միևնոյն ստեն ըլլալ — և այդ հանգամանքը կուտայ անոր զգացական կարեւոր (pathétique) տարրի մը հարողական շնորհութիւնը — արգարահատոյց արարք (acte de justice) մը հանդէպ քերթողին, զոր քննադատը

տը չի սխալիր դառնելով իբր յարաբերաբար անիրաւուած մը, անզիտուած մը, այսինքն մէկը որ չէ գրուած մեր գրութիւնաց մէջ այն ստաղնակարգ զիրքը որուն արժանի կը կացուցանեն զինք՝ իբժանաստեղծի տաղանդն ու իբժ գործը:

Յ. Օշական այս զժուարին աշխատանքը — Վ. Թէքէանի հասակով եւ որակով բանաստեղծ մը խորագէտ հասկնալու եւ հասկնելու — յաջողազէս, արցիւնաւորապէս կատարելու համար՝ անժխտելիօրէն ունի պէտք եղած գրական հաշիւը, հմտութիւնը, ընթերցմանց պաշարը, տեղեակ է տունային եւ օտար զրիւար գրականութեանց, անոնց յատկանշական հոսանքներուն եւ ներկայացուցչական գործերուն, ինչ որ կարող կ'ընէ զինքը բաղդատական ցուցմունքներով, մերձեցումներով եւ օրինակներով յուսաւորել եւ ամբացնել (corroborer) իբժատաստանները: Աւելցուցե՛ք առանց վրայ արուեստագէտի զգայնութիւն եւ արտայայտութեան մեծ կարողութիւն — Յ. Օշական ծանօթ է որպէս ինքնատիպ գրագէտ — բարդ ու բազմբանց խորհողութիւն մը, հաւաստարպէս ստակ մտերուն և մանրամասնութիւններու նրբախոյզ վերլուծումին, ինչպէս եւ ընդհանրացումներու, զաստորումներու եւ համակրումներու լրացուցիչ եղբայրակող աշխատանքին, և սիրտի կրնաք գաղափար մը կազմել խնդրոյ առարկայ ուսումնասիրութեան բաղկացուցիչ տարրերուն և բազմազիմի յատկութիւններուն:

Յ. Օշական խորապէս կը սիրէ բանաստեղծի և կը հիանայ անոր վրայ, ա՛սիկա է ներշնչող ու զին, մայք ազը՝ իբժ զամբարձր բազմազան աշխատանքին, որ կը ծաւալի ընչ էն, զլուրիէ զըլուրի, ընդգրկելով Վահան Թէքէանի ստեղծած բանաստեղծական շէջամին՝ բոլոր յոշնայտոյտ ակները, բոլոր շրջագիծները, հաւատարմորէն ցուցնելով անոր բոլոր հրապոյցներն ու խորհուրդները:

Յ. Օշական տարգազիւնօրէն յամա, համբարատար ճիգով մը ցոյց կուտայ: Կը պարզէ ու կ'ընդլայնէ իբժ սիրտն և հիաստան պատմաստերը, բազմաթիւ մէջերուամերով, բազդատութիւններ

րով և հակազդութիւններով՝ ուրիշ երկերու: Խոհապէս համոզուած, ան կ'աշխատի համազօր: Վասն թէ ճշգրտին տալանդին ու հոգիին բոլոր երեսները, գործին բոլոր ստանկները ի վեր կը հանէ իր մտքին լուսարձակը ուղղելով անոց իւրաքանչիւրին վրայ, ուղղելով ևս յամենելով, մինչև որ ձեզ չհետախուզուած ո՛ր է և ո՛րք:

Խանդավառ (passionné) հասկացողութեան — եթէ կարելի է ըսել — գործ մըն է ստիկա, հասկացողութեան ընտանիքէն անտնց զոր մտքի տանք, արհեստով ո՛չ ընհաստներ, կատարած են ստեն ասին, խլճի քաղցր պարտակներէն մը կատարելու պէտք: (յիշել Պատէճի ուսումնասիրութիւնը՝ հանճարի ելլոր մը՝ է. Բոի մասին): գործ մը որ անգիտացողներու կամ ցարդ անտարբեր մնացածներուն պիտի ըստ արմատնոյն ճանչընէ սիրցնէ բանաստեղծի մեծարժէք գործը. իսկ անոր վաղեմի հիացողներու ընտրանին աւելի խորապէս պիտի արմատնէ իրենց զգացումն մէջ, անոր խորունկ պատճառները լուսաւորելով, գիտակցութեան պայծառութեանը հանելով ինչ որ չդիմէ էր ու կերպիւ իւր ընազգական:

Ամէն բան հանկուտ ամէն բան սիրելու համար կ'ըզեր կէօթէ. անկարելի է մը. Թէ ճշգրտանը չտրելու — եթէ կան չտրողներ՝ կարգապահին հասկնալու կարող ընկերացողներու բազմութեան մէջ — անկարելի է կ'ըսեմ, Վ. Թէ ճշգրտանը չտրելու հասկնալէ ճանչնալէ յետոյ զինքը՝ այս նշանաւոր ուսումնասիրութեան լոյսովը:

Վ. Թէ ճշգրտան — այս երգակցութեան պիտի հասնիք անվրէպ յաւաքտ այդ ուսումնասիրութեան — մեր ամենէն ազնուական, խորագրաց, անձնական (personnel) և կարմիր ընտանուցուն է: Եւ ամենէն ճիւղացապաշտը Յ. Օշականի բառովը:

Իր կատարելութիւնը, անվիճելի, ժխտական չէ, ըսել կ'ուզեմ չի նշանակեր բնաւ բացակայութիւնը այն թիբութիւններուն որոնք ուրիշ շատերու քով այնքան ակներձ են, փաստաբեր, ստուերածող, այլ նաև ու մանաւանդ գոյութիւնը, ներկայութիւնը բոլոր այն վաւերական յատկութիւններուն և շնորհներուն որոնք յատուկ են հարապատ բանաստեղծին և անրաճեղա:

Խոր, սարսուռն բայց զուպ զգայութիւն. երևակայութիւն մը՝ հարուստ այլապէս տարբերով. բայց առանց աւելորդ շուայութեան և ցուցամոլութեան. զգայութեան (sensation) զգացում և անկէ ալ ի խորուրդ (pensée) բարձրանալու տիրական շնորհ և կարողութիւն, կերթ. խտապասանչ, գրեթէ անսխալական ճաշակ, չափի (measure), ժուժկալութեան և վայելութեան ըրնազգ — ինչ որ զինքը ամենէն զգասականը կ'ընէ մեր ուսումնիքներուն(\*) — կըտոյթի և ներգաշ-

նակութեան խոր զգայարանք, խորշում ամէն out-rance է և զիջմանուճէ, մանաւանդ այն հետաւորութեան, ճոռութիւնէն, պրոնուպիւնէն (emphasis, declamation) որ մեր հին եւ նոր քնարերգներուն — Ալիլանէն ու Դուրանէն մինչև Սիւսաննի և Վարդաժան — մեծագոյն մեղքը եղած է, եւրոպական ուսումնիքի մանկէն յոտի մէկ ունակութեան նմանուլութեամբ և խորբացումովը. զգայմանց արտայայտութեան մէջ տեսակ մը ստոմիկ անթիլածութիւն, զսպում և վերապահում, որ այնքան կ'աւելցնեն իր տաղերուն թիւարգական առէն և յուզականութիւնը:

Ստուգիւ, Թէ ճշգրտան մեր միակ բանաստեղծն է թերևս որ, բացի իր ազգասիրական կարգ մը քերթուածներէն ուր աստիճան մը արդարանալի է անիկա, զերծ մնացած է հետետարութեան ըսկըրնական մեղքէն, և զոր՝ այս պատճառաւ իսկ կարելի է բազդատութեան զննել եւրոպական իմաստով ու տարազով շարունակապէտ բանաստեղծներու հետ, ինչպէս Պատէճ, Մալաուճ, Ռէնիէ, Սամէն, Մոսէն, Ռուէնայա, Նոյն իսկ Վէրէն, նուազ շարունակապէտ, որ պիկան իր Ալբուստո ֆերթոյականներն մէջ գառաշինն պատգամց նոր շանգանակը՝

Prends l'éloquence et tords-lui son cou.

Վ. Թէ ճշգրտան մեր աշխարհարար ոտանաւորին մեծագոյն պարզեցող, մեծագոյն աղետասպալէտը՝ միևնոյն տանն, ան որ յարողով է — ի պիկ ինչ աշխատանքի, շնորհիւ ինչ մշտաստեղծ կատարմի մը զէպի կատարելութիւն, — իխտա ու թմանը հնագոյնները, իրտ քաղաքայիններու սուգորներով խորացող մեր լեզուն ընել կարելի եղածին չափ զաշխակատար և հեշտալուր — բանաստեղծական սերքին յարմար — որ մեր հետա ու սպերախտ ոտանաւորին (բաղաճամբ աւելի բախտաւորներու, օրինակի համար իտալականին, անգլիականին, ֆրանսականին) տուած է ճկունութեան, հոսանուտութեան (fluidité), երաժշտականութեան առաւելագոյն չափը որուն ընդունու է:

Ան, հակիրճ թուումով մը որ յաւանդութեան չի կրնար ունենալ նոյն իսկ ամենապիտա մէկ schéma ներկայացնելու ընդազատին ստուար աշխատասիրութեան, ինչ որ Յ. Օշական իր շուրջ երկու հարիւր էջեր բաղկացած երկին բազմաթիւ գլուխներուն և ստորաբաժանմաններուն մէջ կերպարուն և խլճնորէն վերլուծած ուսումնասիրած և ի վեր հանած է:

\* \* \*

Վերջացնելէ առաջ այս ամփոփ տեղեկագիրը, թո՛ղ ներուի ինձի մէկ քանի գիտողութիւններ և վերապահումներ արձանարկել հոս: Նախ՝ իր ոճին մասին. Յ. Օշական, — ինքն ալ ինքնատիպ գրապէտ

(\*) Ռումանիի՝ վերադիրը, Թէրլեմոյի կիրարկուած, թող չխրտցնել: Ֆրանսացի տմենէն ներդուն ընտալանուրէն մին. Էսմոն փալու վերջերս իրուակի գիտել կուտայ որ ամէն մշտնապետ բանաստեղծ

ուսումնիրիկ է, ուսումնիրիկ կը ծնի: Դասականութիւնը (clacissisme) թերևս աւելի մուի (form) լընդիր է քան թէ խորրի (fond):

— արտայայտութեան մեծ կարողութեամբ մը օժտուած է, ինչպէս ըսի արդէն. կը ցատիմ ըսնուաւ որ իր սօը, որ ունի շիզ, կորով, պատկերներու փայլ եւ շանգիւնութիւն, զեթ չէ թերութիւնս ներէ, իր ջով՝ արուեստագէտը, կամ ոճի գործաւորը (artisan) միշտ հաւատարմ է յղացողին, խորհողին: Իր լեզուն, յաճախ, կը թօփ ինքնայայտութեան կանխիկ ի մասն յտակութեան, վայելչութեան և ներզանգութեան, ըսնազբօսիկ ու տածանքտ չես զհոտր ի՛նչ մը զգալի է հոտ տեղ տեղ: Շատ անգամ ամենապարզ բան մը ըսելու համար այնպիսի մանուածապատ և անսովոր (insolite) ձեւեր ու բացատրութիւններ կը գործածէ որ ընթերցողին կը հարկողորն հասկացողութեան խփահացումի աւելորդ հիշ մը, աւելորդ որովհետև չի վարձատրուի թանկագին գիտելու որ անհնկային հանցովը: Այս՝, շատ անգամ իր լեզուն պարզ սեղր իբր թիւն է. մեծ խրթնութիւնը, մթութիւնը երբ մտածումի բարդութեան կամ նրբանրբութեան (subtilite) կը համապատասխանէ, ընդունելի է. այլապէս՝ ո՛չ. իր ուսուսնասիրութեան մէջ շատ տեղեր՝ Յ. Օշական կը գիմէ այդ իբրնս թնամ, առանց այս դիտողութիւնը կամ ստգտանքը իր վրայ հրաւիրելու, ուրովհետև խորունկ կամ բարդ մտածում մ'է որ կը պահանջ գան, կերպու իւրք կը հարկադրէ, եւ հիզը զոր ընթերցողը կ'ընէ՝ անարժէք արգիւնքի մը համար չէ:

Յ. Օշական կը զեզծանի նաև փակագիծերու, միջնակահանրու մայրախիզ գործածութեամբը: Երբ արդէն երկարածիզ նախադասութիւն մը կը խնդուի կ'ընդհատուի այդ տեսակ եկամտու (advective) — բանամոք՝ չըսելու համար — մասերով, ընթերցման ընթացքը բնականաբար կը զանապղի, ընթերցողին ուշադրութիւնը կը ջըրուներ կը մտաբեր կը յոյնի, իմ կարծիքովս՝ այս անպատեհութեան առաջը շատ զիւրաւ կարելի էր ստանել այդ փակագծաւոր եւ միջնակակալ Փրագուները — գէթ երկարադիմները, որոնք այնքան ստուարաթիւ են — էջերու ներքև գետեկելով իբրև սօր:

Յ. Օշական տալանդաւոր եւ ինքնատիպ զըրող մըն է անլիւնկխորէն, բայց իր գրելու ձեւը յաճախ կը պահպի տեսակ մը շնորհէ, հրապուրէ, չնմ ըսեր պարզալեզու (որ ամէն գրագէտի տրուած է), ոչ ալ պատշաճ է ամէն գրեական իրաւունքի, մանաւանդ Օշականի խառնուած գէն գրագէտի մը)՝ Եր գրակամ դասասաններու մասին:

Սրան թէճէնանի սերունդը եւ միջավայրը ուսուսնասիրած առեւն, քննադատը քնականօրէն կը իբրտի խօսելու և կարծիք յայտնելու անոր երէշներուն և ժամանակակիցներու մասին. ընդհանուր կերպով իր գատաստանները արգաւ եւ անաչառ կը գտնուի. բայց չնմ կրնա իրութեամբ անցնել մէկ քանի մեծ անխրատութիւններու վըրայ զորս ան կը գործէ ո՛չ թէ անցողակի, առանց շատ մանրամասն, յայլ հաստատօրէն, սխտեմատիկաբար (կը խորհիմ գէթ միշտ...) նախ պիտը չափապէս պարամարտու կը գտնեմ թովմաս թեղեկանի մասին զոր գծբախաբար շատ

քիչ կը ճանչնամ, ինչ որ զիս զգուշաւոր կ'ընէ պաշտպանողական մէջ. կ'անցնիմ. չափազանց արամարտու — եւ նա համովմամ կ'ընեմ՝ անիրաւ՝ Ռ. Պերշերեանի մասին. անոր իոճք և Յուլքը ըստ իս մեր արդի բանաստեղծութեան — մտերմիկ քնարեղութեան (lyrisme intime) արժէքաւոր գործերէն մէկն է, կարող՝ իր հեղինակին քաւել տալու կեղծուումներովի և հետուրութեան իր ըսող երիտասարդական մեղքերը: Բայց ապիցուցիլ եւ ընդլեցուցիլ կերպով անարգար կը գտնեմ զինքը Տ. Զրաքեանի մասին, որ իմ համողումովս, և ինձի պէս մէկ քանիներու համոզումով՝ որ ապագայ սերունդներունը պիտի ըլլայ իմանով, մեր մեծագոյն հանձան է, եւրոպական հոստորով մեր ամենէն արիեղբանական հանձարը, մեր մեծագոյն արուեստագիւր բանաստեղծ — խորհողը: Բանաստեղծ բառը կը գործածեմ հոս ո՛չ թէ խորելով միայն Շերտանստանին, ուր, հակառակ Յ. Օշականի անձնական կտրուկ վէճերունը (\*), Վիամապաշտու, Նոյն իսկ խորհրդապաշտ բանաստեղծութեան մէկ քանի գլուխ-գործոցներ կան, կ'աւտարեալ թէ՛ խորքով թէ՛ ձևով — այլ մանաւանդ զարմանահարչ Ներաշխարհին, Անուինի, Յաւիտենականի այդ անման աղօթաբքքին, ուր իբրացած է նկարիլ մը, միտտիք քնարերգակի մը և վերուժող — խորողի մը, խառնուած քներուն ամենէն հրաշալի ձուլում մը, զոր կարելի ըլլայ երկնապաշտ: Ռ. ի՛նչ անբաղգատելի ձիբքերով օժտուած նկարիչ, քնարերգակ ու խորհող, և որպի՛սի հզօր ինքնատուրութեամբ: Վերաշխարհն՝ անհաստեղծի զաւթիմ մըն է մեր գրականութեան մէջ, յաւերժական փառքը մը լուսահանանչ, ու մեծապէս զարմանալի ու ցաւալի է որ Վ. Թէճէնանը այրքան խորապէս հասկցու ու ցնահատող քննադատ քնարական մեծ անխրատութիւն մը գործէ ուրիշ մեծ ու վաւերական արուեստագէտի մը հանդէպ, թէ շըրաշալի Յարունթիւնօյի հեղինակին խոր հիացող — մէջ ըլլաւ չի կրնա ու պէտք չէ արգիլէ իրեն արժանազայնի մեծարանքը մատուցանել Տ. Զրաքեանի հանձարին, ատոր ապացոյցն է այս անգեղակալիբ ստորագրողը:

Եւ եւ վտանգ մեծ որ Նոյն ինքն թէճէնան, ինչ որ մասնաւոր կերպով աննտոյ և ՄՅՈՊԱՏԵՍԻ պիտի գտնէ իր փառելի եռաբուած այս այնքան խանդապատալից և ներուճ ուսուսնասիրութեան մէջ, հիշչ ուրացումի փորձն է հանդէպ անոր՝ կըր որ այնքան զեղցիկ, արտասուչ եւ վեհիմաստ տալով կը պանծացուցած է իր վերջին հատորին, ՎՄԵՐԻՆ մէջ:

Աղկ՛ո. 10 Փետ. ՄԻՐԱՅԻՆ Ս. ԿԻՌՃԵԱՆ

(\* ) ձիշը՝ կրկ զվերքերին կարգ որ օտանաւ որոնքուր մեկ թերութիւններու, աննորոշանկութիւններու եւայլն. բանք որ սակայն կարելի է արգարացնել ճոճութեամբ իր թիւն (maître) պով անոնք բեռնաւոր են, խորացում պլտրով՝ պարտարուած հեղինակին անմոռ շրջանակէն:

# ՀԱՅՐԵՆԱԽՕՍԱԿԱՆ

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐԻ ՈՒՌՊՄԱՆ ՄԱՍԻՆ



Աւտօրի և նրա վիթխարի շրջապատի գանգաձուր, թէ աւելի ջրեր է ընդունում իր մէջ և թէ աւելի թուով ու ջրառատ գետեր հասցնում իր կրծքից, Անցեայ 1932ին ինջիներ Տէր Աստուածաբանի Մտակգոյում կարգացած մի զեկուցման քաղաւածքից տեղեկանում ենք, որ լեւնային 6340 սա մեծ բարձրութեան վրայ գտնուող Սեւանայ լիճը 1413 քառակուսի կիլոմետր անարտօնութիւն ունի, որ նրա մէջ երկնքից թափուող և շրջակայքից ներս հասող ջրերի քանակն է, ամբողջ տարին հաշիւ ստանալէն մի վայրկեանում 50,4 խորանարդ մետր. գորտ տւածը միայն 2,8 մետր, իսկ մնացորդը ամբողջովին լճի մակերեսոյթը մշտական հաստաբարկչութեան մէջ պահելով, պակասում է անընդհան գորտչիացումով: Զեկուցման ամփոփումը խիստ համառօտ էր, այլապէս մեզ համար մութ է մնում, թէ միթէ՞ յարգելի ինջիները Սեւանի յատակը համարում է առանց ծակտեղծութեան և ճեղքումներ լի կաթոսայ, որ այդ յատակից շին կարող ջրեր իրենց համար ստորերկրեայ անցքեր գտնել եւ մեր երկրի զանազան աղբիւրներին ջուր մատակարարել: Աւերելոյթ ի նկատի է առնւած միայն լճից անմիջապէս գոչերս եկող ջուրը, Զանգու գետի մէջ ճիւղը և գորտչիոցումը: Այդ առումով, իրաւ է, լճի ջուրը 50 մետրով իջնելով, երկրի ջրանտեսութեան համար աննկատելի կ'մնայ:

Բաւականանաք միայն անուններով յիշատակել այն զոլաւոր և աչքի ընկնող գետերը, որ իրենց ծագումով Սեւանի մեծ զանգուածին են պարտական, յորգացած տեղական և մերձակայ լեռների ջրերով: Զանգուն, Գառնի, Վեդիլն, Արփաչայը, Երնջակը կամ Նախիվեանի գետը, Բագարչայը, միջին հասանքում Որտան, ստորինում Բարգուշատ կոչմամբ, Զարուզն ու

Յագարին, Սաչէնը, Թառթաւը, Շամբոր, Աղսահը և Զարագետը կամ Ինքէզ գետը:

Սեւան ընդունելով մի մեծ շրջանակի կենտրոն, յիշւած գետերը նրա շաւիղներն են՝ ուղղւած դէպի նրա պերիփերիան և այնպիսի գասաւորութեամբ, որ երկրի բոլոր մասերը կարող են ինքնահոս եղանակով ստացման ենթարկել: Սակայն, եթէ նոյն իսկ այդ երեւացող ջրերի քանակը բաւականանայ ուսագման կարիքներին, ուշագրութեան պիտի առնենք մի կարեւոր հանգումանք: Մեր լեռների մեծ բարձրութիւնների հետեանքով, նրանցից բոլորը գետերը շատ արագավազ են, ներքև են գլորում անհելի վիճերով ու զժաւարածերձ մայրերի պատուածներով և ընդհանրապէս ոչ տակար են դառնում գաշտանք մասը հասնելուց յետոյ: Մեր երկրի լեռնային և լեռնաստորտ մասերը գուրկ են մնում ջրերից: Անկախ գրանից, եթէ ջրերը գործողութեան բուրսը չափերով բարձրագիւր մասերում, կ'զրկեն ստորին գաշտերը, երկրագործական բարձր կուլտուրաների վայրերը:

Աւելորդ անգամ կրկնելով պիտի ասենք, թէ ջրերի տնտեսաբար օգտագործումը, թէ ծովաքերի անհամմատ խնայողութիւնը գոյէ թիւրաբն Պարկաստանի և Ուրարտայիների օրինակով ընթանալ և մեր երկիրը ևս քանքաններ ունենալ:

Մեր ունեցած տեղեկութիւններով 1765-70 թ. Յակոբ Զուլայիցի կաթուղիկոսն էր, որ էջմիածնում առաջին քանքանը փորել տւեց: Նա ինքը ծնւած լինելով Սպսկանի մօտ Նոր-Ջուղայում և ծանօթ պարսկական քանքաններին, էջմիածնի հին և ստուր կոչւած քանքանները հանել տւեց, որ խլմիւր և փոքր չափով հողեր ուղղելու էին ծառայում: Ամենայն հաւանականութեամբ քանքանափորներն այնտեղից հրախրած պարսիկներ էին:

Նոյն գործի կրկնութիւնը մինջ տեսնում ենք Սրբիմասն կաթողիկոսի ժամանակ. ուս իբրև Վանիցի, քաղաքապետ էր քանքանիսի օգտակարութիւնով. Վանից վարչատեսեր բերել տակ և քանքանի նոր գիծ փորել տալով, հնի հետ միացրեց: Նրա ժամանակ, երբ խնամքով մաքրում էին քանքանի հողերը, հոսող ջուրն այնքան աւատ էր, որ Սրբիմասն Ներսիսեան լճի ներքևում ջրաղաց շինել տակ, որ գործում էր միշտ լիքով դրութիւնով պահւում լճի թափում ջրից:

Անշուշտ Պարսկաստանի օրինակով պիտի բացարձակ Վեդի գիւղի, Հին-Նոսիսի շէնքերն, Աղպրի, Ջակեան-Ջարդարիսի և Գաթաճակի տակաւին գործող քանքանիսի գոյութիւնը:

ժ. Երկաբան ինճիներ Գր. Ալլաբաբեանի առաջարկը.

Իմ ձեռին է ինճ. Գր. Աղաբաբեանի ուստերն լեզուով հրատարակւած մի փոքր բրոշիւրը. Irrigacia Etschmiadzinskii zemli, Kaptaj podzemni vod, Gornavo Ingenera Gr. Agababiana. 1911 թ.:

Այդ թվականներին էջմիածնում փոքր կերպով դրւած էր վանաստան սեպակաւնութիւն կազմող Վաղարշապատի մօտ 7000 դեհատան հողերի սողման կարգը: Վանքի յանձնարարութեամբ մի քանի ինճիներն սողման ծրագրի կազմիցին և իրենց նախաճաշիւներով ներկայացրին վանական կառավարութեանը ի գործադրութիւն: Մարական իշխանութիւնը թուլատրել էր և արտօնել Սեջրից վերցնել 75 բաշ ջուր: Ի նկատի էր առնւած այդ ջրով ուսագլ զանքի հարստային հողամասեր, Ներսիսեան լճից և այն ժամանակայն անտառայն ներքև, մինչև զորոգները տարածող մասը:

Առաջի ծրագիրը յոռնային ուստ ինճիներ կազմակերպել էր, որ հնարաւոր էր համարում օգտուել միայն արտօնութեան կերպով մասով, 25 բաշ ջրով. արդէն գոյտեթիւն աւնեցող Սեջրի սուր միջոցով բերել վանքի հողերը և ջրհան մեղիականի միջոցով բարձրացնել ու ջրել միայն մօտ 600 դեհատան հող: Ծրագիրը պահանջում էր միանալ 140,113 սուրլի, իսկ տարեկան

ծախք պիտի կատարեր, մէջը հաշւած տակտներն ու գրամագլխի աստիճանական զեղչումը, 19,638 ուս: Այդ հաշւով ամէն դեհատանի միանալով ծախքը հաւասար էր 230 ուս, իսկ տարեկանը 32 ուս:

Երկրորդ ծրագիրը ներկայացնողներն էին ինճ. Ա. Լիսիբեան և Տեր Վարդանեան, որ հնարաւոր եւ օգտակար էին համարում օգտուել արտօնում ջրի ամբողջութիւնից, բնտնի խողովակներով ջուր բերել ինքնահոս եղանակով մինչև վանքի հողերը և շրտ աստիճան ջրհաններ գործադրելով էլէկտրական ոյժով առաջի շարք նաստաներով ջրել 270 դեհատան, երկրորդ շարքով 620 դ., երրորդով 390 դ. և չորրորդով 940 դ.: Բրոշիւրի մէջ ծրագրի նախաճաշիւր չի ցոյց տրւած, այլ նկատւած է, որ խիստ թանկարժէք է և տեղական պայմաններն ի նկատի առած, պատահարներն ենթակայ:

Թումանեան և Վասիլեւ ինճիներները ներկայացրին երրորդ ծրագիրը, որ կայանում էր հետևաբար. կալիբէկու գիւղի մօտ բրոշուր աղբերների ստանջ պատնէշել, ինքնահոս առու փորել մինչև Ղրկիք հողերը, առուի տակ անհեղձ 1220 դեհատան, իսկ կթէ պատնէշը փորել աղբերների ակներից 2 արշին աւելի ցած, նոյն եղանակով կարելի է ջրել միայն 1020 դ.: Նախաճաշով ծախք ցոյց է տրւած 20-25,000 ուս. պատնէշի, աքիզուակի (Քասախ գետի վրայ) և առուի համար: Այդ առաջարկը աւելի բանաւոր համարելով. վանքը ձեռնարկեց գործի. պատնէշի վրայ ծախսեց 10,000 ուս: Իայց լճայած ջրերը պատանցին պատնէշը և ծախսած գումարը իսկապէս ջուրը տարաւ:

Չորրորդ առաջարկը վերջապէս ինճիներ Կիրակոսեանին էր, որ ջանկանում էր ընդլայնել Երեանի իր կառուցած փոքրիկ էլէկտրական հիդրոէլեկտրակայանը, էլէկտրական հոսանքը բերել էջմիածին, վանքի մերձակայքում աւելի խորը հորերով քանքանի փորել և ստորգետնայ ջրերը նաստաներով բարձրացնել և ջրել, մի կողմ թողնելով Սեջուրը, հարաւում ընկած անտառից ներքեի հողերը: Սրա միանալով ծախքն էր բանքանիսի համար 25,000 ուս., իսկ էլէկտրական ոյժը տեղ հասցնելու համար նաստաների հետ միասին, 130,000 ուս.:

Դարձեալ չի ցոյց տրւած թէ տարեկան որքան ծախք էր պահանջուում:

Բրոշիւրի հեղինակ Աղաբաբեանը վերջինչեալ ծրագրերի նկատմամբ համառօտակի, մի քանի նախադրուածութիւններով հետաքար է համարում Թուրքիանի և ընկերով ծրագրերը. կիրակոսեանինը այն չափով, որ կարիք չկայ նաստաների և էլէկտրական ցածի, այլ հորերը շարունակելով պիտի գետնի կրկնը ջուրը հանել, մանաւանջ որ հողի արագօթեամբ իջնող մակերեսովը այդ հետաքարութիւնը տալիս է, մի փոքր տարածութիւն աւելի պակաս ջրելով:

Հետաքրքիրն այս փաստն է, որ կամենում ենք այստեղ յատուկ շեշտով յիշատակել: Վանքի տպարանում այդ մասնակի գործում էր ինքնուս վարպետ Ղեւսնդ Ղարախանեանը, իր օչխմութեամբ յայտնի մէկը, որ իբրև պարսկաստանցի, քովածանօթ էր այն տեղի քանքանափութութեան գործին թէ Թարիզում և իէ Սպահանում: Նա լսելով դիւլմաւար Կիրակոսեանի մեծածախք պահանջը, խնդրեց իրեն տրամադրել ընդամենը 1200 ա., որով նա խոստանում էր արդէն գոյութիւն ունեցող հորերը խորացնել և տարածութիւնը երկարացնել. ապա արդէն պատրաստի նաստաներով և վանքի էլէկտրական կայարանը գործի դնելով, չորս դիմանոց խողովակով որ ու գրչեր, անընդհատ իր փութակ հորերից ջուր հանել: Վանքը վարպետի պահանջած ծախքը վճարեց. վարպետը տառաջիկ կատարեց իր խոստումը և ստացաւ 1200 ա. պարգև: Վարպետի փութակ հորերը մինչ ջուր մնում են և գործում ներքինսան լինը ջուր լցնելով:

Ծանօթանանք Աղաբաբեանի սեպական առաջարկին: Բրոշիւրի ամենից հետաքրքիր մասը կազմում է՝ եկիւրաքանուրիւն եւ Աղաբաբեանի դաւաճ ստրեկիտայ ջրաբանութիւն — Geologia i Podzemia Gidrologii Vigarshatamskoi ravny: Իբրեւ հրկրաբան ինչ. Աղաբաբեանը չափեց և ուսումնասիրեց Վաղարշապատում և մերձակայ գրեզերում գոյութիւն ունեցող ջրհորերները, հաշի առաւ հին և նոր քանքանեանները, չափեց Սեւրի քանակը սպառնքների մօտ և Իզդրիի շտակի վրայ եղող կամուրջի տակը. հաշի առաւ Ղորազի, Ձա-

բանքարայի, Վարմաղիարի ճակնեանը և երակակայութիւններ տալիս է այդ տուեալներով:

Արագածի խորխիս կազմող Վաղարշապատի դաշտը ծածկած է, զանազան հաստութեամբ և ծաւալով, երեսացող լանտերի դարաշրջանից մնացած ուսպնեիով և հեղեղատեաների գանգածնեիով: Երկնքից տեղացող անձրևն ու ձիւնը յիշեալ ծաւալակէն միջագայրով ձգվում են երկրի ներսը, մինչև կաւային շերտերը, որպիսի արզիլի ճեղքներով կամ այրիւնի կազմելով երկրի երեսն են գտրու պալիս, ինչպիսիք են Սեւրի վիթխարի աղբիւրները, կամ թեք մակերեսովով աւելի հեռուները ձգելով, կազմում են յիշատակած ճակնեաները:

Արագածից անմիջապէս եկող հոսանքներին միանում են Արայի լեռան և տեղական տարածութիւնների ստորերկրայ ջրերը: Թէ ինչ մեծ չափեր ունին ստորերկրայ ջրերը, ցոյց են տալիս նոյն Սեւրի վրայ կատարած չափումները: 1910 թ. նոյեմբեր ամսին, հետեւապէս ստորերկրայ ջրերի բաւական պակասած ժամանակ, Թուրքիայի Զէյթի վրայ գրեզի մօտ Սեւրը հոսում էր ամեն մի վայրկեանում 7,500 լիտր քանակութեամբ, իսկ կամուրջի մօտ, ընդամենը 7,5 վերստ ներքեւ, այդ քանակը հաւասար էր 39,000 լիտրի, որի մի հազար լիտրը Գասախի խոռնարանից է տեղանում, մնացեալ 30,000 լիտրը ստորերկրայ ջրերի սուզածքներից էր գոյանում, այն ևս 7,5 վերստ շինչին տարածութեան մէջ, Փայլուն ապացոյց թէ յատկապէս Վաղարշապատի դաշտի խորքում ինչ առեկի քանակութեամբ ջրեր կան թագնած:

Մի քանի տարի անց, մինչ ոտիթ ունեցանք Ամբերդի ձորը տեսնելու և լսեցի, որ այդ ձորից զանազան գրեզերի համայնքերի իրենց համար ջուր են տանում: Ձորի ամենաբարձր լիւրքից սկսած մինչև բերդի տակը այդ առունների թիւը 12 էր, ի նկատի ունենալով, որ Ամբերդը սկզբնաբար հիմնել է Ուրարտայիների ձեռքով և կարծելով, որ առունների սկսածքը ևս նրանցից է մնացել, ձորում հետախոզութիւնների կատարելից սեպած արձանագրութիւն գտնելու յուսով: Սեպածեկ

փոխարէն հանդիպելի մալինա թփերի մեծ քանակութեան, հասած պտուղներով, չափազանց անուշ եւ կտտաւէտ յատկութեամբ: Տեսայ միեւնոյն ժամանակ թէ ինչպէս են կազմուած 12 առուազուխները: Խորը պատուածքով ներքե իննոզ ձորի երկու փէշերից անընդհատ ջրեր են սուզուում: Ամեն մի առուտէր ձորի մէջ կանգնեցրած պատնէշով մաքուր կտրուած է մինչ այդ հոսող ջուրը. հետեհեալ նոր առուազուխը 100-200 մետր ներքե է, բաւական տարածութիւն նոր ջրերի գոյացման, նոր առուատիրոջ համար:

Այն ինչ որ Սեղբուած է կատարուած գետնի խորքերից, աչքի համար ոչ տեսանելի, Ամբերգայ ձորում ունենիւ է կատարուած:

Դառնանք Աղաբարեանին: Ստորերկրայ ջրերի փաստ է համարուած նաև Ուլուխանու կայարանի մօտ փորած արտեզիան ջրհորը, որ ընդամենը 12 սաժէն խորութեամբ, 3 զիւմանոց խողովակով վայրկեանում 22 լիտր ջուր է առնիւ: Հաշիւ է առնում վանքի հին և նոր քանդանները, որոնց սկսած ամենարժար հորը Սեջրի մակերեսից 18 սաժէն բարձր է, հետևապէս Վաղարշապատի հողերի բարձրադիր մասերը ևս կարելի է ջրել, առանց Սեջրի մակերեսի ինքնահոս առուի զրկելու, կամ արհեստական նստուների ջրարարացմանը: Խորհրդային իշխանութիւնը մի քանի նոր արտեզիան ջրհորներ է փորել, որ բրոնզիէր գրելու ժամանակ չկային:

Հորերի չափերը ի յայտ բերեց մի ուրիշ հանգամանք. Վաղարշապատի դաշտը ստորերկրայ ջրերի երկու շերտ ունի. առաջինը սկսուած է Քասախ գետից և տարածուած է մինչև Ծոցակաթի վանքը, ոչ այնքան խոր հոսող ջրերով: Երկրորդ շերտը սկսուած է այգեանդից և տարածուած է դէպի Զուարթնոցը, որտեղ ջրի հոսանքը 9 սաժէն աւելի խորն է ընկած առաջինից:

Ընդհանուր տեղադրական քանութիւնը թեան վրայ հիմնած՝ նա վանքին առուջարկեց հինգերորդ ձրագիրը. մի կողմ թողնել Սեջրի և նստուների միծածախք ձեռնարկները, փորել երեք ուղղութեամբ նոր երեք քանքաններ, ծախսելով 30,000 + 10,000 + 30,000 ընդամենը միանուագ

70,000 սուրբի, և գոյութիւն ունեցող առուների հետ կամրինացիաներ կատարելով, ջրել վանքի ջըրած 4,500 դեհեատին հողը, հետևապէս Վաղարշապատի ամբողջ դաշտը:

Երեք քանքանների տարեկան նորագութիւնների և մաքրելու ծախքը չնչին կ'լինի:

Քարհիլդների կամ քանքանների մասին մի ամփոփ տեղեկութիւն կարգացի Մարիետա Շահինեանի Օթարգրութիւն գրքւածքում, հրատարակւած 1932 թ. որ իմ ձեռս անցաւ սոյն 1933 թ. մայիսին, որ համառոտութեան մէջ շատ սիրուն եղանակով լուսարանուած է այդ խնդիրը: Նա գրուած է այսպէս.

«Գանձակի քրամասակարարում. պատուած ինձինք զիգրավիլի Սուխիճի կողմից: Աղաբարեանում ջրամատակարարումը կատարում է Բարիճիգերով, տեղական յատուկ շինարարութեամբ: Քարհիլդները շատ հին են. մեզ մօտ մտել են Պարսկաստանից, իսկ ծագումը Ատրեստանից է: Քարհիլդ փորողները, քեանքաննչի կռուած, բացառաբար պարսիկներ են միայն (տեղիւն ինչիւն ունէր չէ). վերջերս գրոնց թւին աւելացել են հայեր և թուրքեր, որ արտախիկ աշխատելու ձեերի մէջ նորութիւններ են մտցրել: Պարսկաստանում քարհիլդների սիտեմն այնքան է առաջ դնացած, որ այնտեղ գետնատակ ջրեր են ժողովում մինչև 150 մետր խորութիւնից (չափաւորած ինչ է): Մեզ մօտ Աղաբարեանում գոյութիւն ունին մի քանի հազար (?) քարհիլդներ. միայն Դանձակի շրջանում կան մօտ 170 քարհիլդներ: (Այստեղ յիշած երեք խորքը, 150, հաւանոր եւ 170, խորած եմ դեռ է ընդունել որչ վերագոհում): Ի միջի այլոց քարհիլդներ կան նաև կալիֆորնիայում, բայց աւելի կատարելագործւած ձեւով, քանի որ շինողներն ինջլիներներ են: Ընթաց Սուխիլդ աւերեսոյթ քարհիլդների նկատմամբ թիրահաւաւ վերաբերմունք ունի. իսկ ինձ (Շահինեան) թուած էր որ դա գրաւել էր և հիմնական միտքը խիստ յաջող:

«Դիտերն էլ մարդու նման կրկնակի կենքով են ապրում, գետերի տակում և գետնի վրայ և յաճախ այդ կրկնակի ապրումները միմեանց չեն ծածկում: Ինչինք

Մուխինն այսպէս էր պատմում. Լեոնային գետակը սկիզբն էր առնում բարձր լեռնե-րից և քահպէժ գորտում է գկպի գաշաբլ: Նրա անցած ճանապարհի առաջի մասը մեծաւ մասամբ ժայռառենով է ընթա-նում և ջուրը գետնի մէջ չի ներսուզ-ւում: Բայց հէնց որ գետը հասնում է վաշ-տային մասերին, որտեղ գետինն արզէն թափանցիկ է, ջուրը ներս է ձծւում և կազմում է վերնագետի հետ երկրորդ մի գետ գետնի տակում, զուգահեռ վերինին, բայց ոչ միշտ նրա անմիջական ներքում, այլ ճիւղաւորուում է հովհարանման, իսկ տեղ տեղ էլ ճահիճներ է կազմում: (Աւելի ճիշտն է ուղղել և բնութիւնը կար-շահանալինը):

Ան ահա քարհիլի միջոցով կարողա-նում են առնել այդ գետնատակ ջրերը, ստորերկրեայ առուներին տալով որոշ թե-քուիւն, որպէս զի ցանկացած սողում ջուրը բարձրանայ գետնի երեսը . . . քար-հիլը շինում են այսպէս, փորում են 40-50, երբեմն մինչև 60 մետր խորութեամբ (Պարսկաստանում այդ խորութիւնը երբե՞հ մինչև 150 մորթ է հասնում. կիլի-ած է) հորեր մտա 40 մետր հեռաւորութեան և գետնատա-կում միմեանց հետ միացնում են: Իսկ քարհիլի երկարութիւնը կարող է լինել երկու երեք, մինչև եօթ կիլոմետր . . . քարհիլի միջոցով ջրատացումը անհամե-մատ աւելի սժան է . . . օրինակ 1931 թուի գնիրով Գանձակում քանքանի մի-ջոցով որոշ քանակի ջուր ստանալու հա-մար պէտք էր միայն 6-7 հազար ուրուլի, իսկ նոյն քանակի ջրի համար գետ-նոտերեսի առուններով ջուր ստանալը կ'ար-ժենար 315 հազար ուրուլի):

Գանձակի շրջանում, ինչպէս ասել է, Գանձակի գետի ուղղութեամբ գործում են մինչև 170 քանքաններ, գետնաերես են հանում մինչև 80,000,000 խորանարդ մետր ջուր և տարեկան ջրում են 500 հեկ-տար հող (տե՛ս յիշւած արքի ԼՂ 421-423):

ՃԱ. Սեբակացուբիւն և մեր առաջարկը.

Մեր երկրի կոնստիտուցիոնալ կրիման ու-սողումը անհրաժեշտ է զարմնում: Մեր երկրը գտնւում է Ներողայի քաղաքա-կրթութեան հտապնները նախապարաստող

Ատար-Քարելուխի, Եգիպտոսի, Փոքր-Ասիայի և Պարսկաստանի սահմաններին կից, որտեղ քաղաքակրթութեան նախա-գրեալ պայմանը ծառայել է հողի մշակումը ուսողման միջոցով: Մեր երկրի հնագոյն պատմական րնակիչները, արեւմուտքում Հեաիսները, արեւելքում Ուրարտացիք կամ Մաղիդացիք, ազգուօրէն մասնակցել են հին քաղաքակրթութեան յառաջխա-ղացմանը . մասնաւորապէս Մաղիդիք ջրաշինարարութեան մէջ խոշոր, ցայտօր գործող ձեռնարկներ են թողել իրենց ժա-մանակեայ ամենակատարեալ տեխնիկա-յով: Չափազանց սակաւաջուր Պարսկաս-տանն իր մշակելի հողերի համարեա երեք քառորդը օգտակար է դարձնում ստորեր-կրեայ ջրերի շահագործմամբ: Այս սիւս-տեմի զործադրութիւնը Հայաստանում թէ՛ և չի ընդհանրացել, բայց Վանի, Թիմարի, Գանձակի, Նախիջևանի գաւառների և էլ՝ միածնի հին ու նոր փորձերը գործի կա-տարեալ յաջողութեան պրաւականներն են: Գիտական պատրաստութեամբ երկարաւնի ձեռք բերած տուեալները և մանաւանդ վարպետ Ղ. Ղարախանեանի մեծ արդիւն-քի ի յայտ բերուլ մեր երկրում քանքան-ներով ստատուող մասն և այլ նպատակ-ներին համար, ջրեր ստանալուն, ոչ մի կասկած չեն թողնում գործի յաջողութեան համար:

Էլմիածինը չգործադրեց ինձ. Աղա-բարեանի չափազանց խոստումնալից առա-ջարկը, որովհետև 1912 թ., համարեա կէս գար անվերջ դիմումներին յետոյ կողկաս-եան ցարական իշխանութիւնից իրաւունք ստացաւ Չանգու գետից ինքնահոս առու հանելու և տուայ ժամանակ կործանելու անմիջապէս գործի ձեռնարկից: Վրայ հա-սաւ աշխարհուէր պատերազմը և մինչև այժմ անուշադիր և անդործադրելի է մը-նացիլ քանքանափորութեան խնդիրը, մեծ ծրագրային չափերով:

Մեր գետերի մեծ մասը գոյանում են արտասովոր մեծ ազբիւրներից. ամենա-խոշորներն են՝ յաճախ յիշւած Սևջուրը, Մինուսիի առուի ազբիւրը, Շաքիի ազ-բիւրը Սիւսիանում, Գիւսաի գետի ազբիւր-ները՝ Ալիքուչակի, Վաղում, Մերան մայ-րաքաղաքին աշխիսի սքանչելի ջուր մա-տակարարող Ղըխուււղը, Գառնի գետի

ազրիւրները և շատ շատերը: Այդքան մեծ յորդոսթիամբ դուրս ժայթքող ազրիւրներն ապուցոյց են, որ հոգի ծակտակէն շերտերով ներս թափանցող ջրերի բաւական խոշոր մասը, աւելի խորը թափանցելու բնական արգելքի հանդիպելով, կուտակուում են մի ուղղութիամբ և մեծ ազրիւրներին սնունդ տալիս. բայց չէ՞ որ որոշ տեղերում արգելիչ շերտերը տարբեր թիւքութիւններ ունին կամ տարբեր խորութիւններ: Հմուտ քանքանիփորները և տւելի շուտ երկրաբանները գործն էլ գտնել այդ տարբեր շերտերի ուղղութիւնը, որոնց ջրերն են զանազան ճահիճների անպէտք և վնասակար գոյացումը առաջ բերում և քանքանի փիլոսոփ, ցանկացած վայրում հանել երկրի ներսը և շինարարութեան նպատակների համար օգտագործել:

Պարհրդային իշխանութիւնը տարէ ցտարի մեծ ծախք ու ջանք է թափում, գրեհամբ միջոցով շորացնել Արաքսի հովտի ուղղութիամբ ընկած ճահիճները, մաւարիայի գէմ կուէլու և բամբակամշակութեան համար օգտակար հողեր աւելացընելու: Մասնապէս տնօրէ վիայութեամբ կապտածով հնարաւոր է Վաղարշապատի գոյտում 4500 դեռնատին հող ջրել, եթէ այդ իրագործւէր: չէ՞ որ այդ տեղի էր ունենալու ի հաշիւ գործողի. Վարձապիտի էայն ճահիճների ջրերի, որով մեծածախք գրեհամբ անպէտք կորցող ջրերը երկրի կուլտուրայի մշտական ազրիւր կը գտնային:

Ամբերդի ձորի յիշած բազմաթիւ առուները ջրերը ամառայ վերջերին բաւական պակասում են և ջրային վէճերն ու ընդհարութեանը սովորական են գառնուում, մինչդեռ նոյն ձորի աջ կողմում գտնւող Նրամիի գիւղի և Նրամիից աւելի բարձր ընկած տեղերում ընդարձակ ճահիճներ կան, որ քանքանիների մէջ ի մի հասցւած ճահիճները կ'շորացնեն և ջրի սուր պակասութիւնը կ'թիթեկացնեն: Նոյնպիսի ճահիճներ ծածկում են Ղարաբաղից հարաւարեւելք ընկած տարածութիւնները: Ծահիճներից աղտոտ չին նաև Սևանի լճի մերձակայքի հոգերը: Զաղալու գիւղի մօտ նշանաւոր Մազրայի և ուրիշ տեղերում:

Քանքանիների օգտակարութեան մօ-

մնանները կարելի է համարել հետեւեալները: Ունենք երկրամասեր, որտեղ ջուր հասցնելը մեծամեծ ծախքերի հետ կապւած լինելով, օգտագործման հնարաւորութիւնից դուրս են մնում: Քանքանիների փորելը, մանաւանդ ներկայ տնիսիկայի օժանդակութեամբ, կեր արկելով անքափորութեան սխտեմները, ինչպէս ինչ. Ազաբաբիանն է առաջարկում, աւելի ստան կ'լինի, քան շատ տեղերում. առաւելի անցկացնելը, որովհետեւ ճանապարհին չեն ունենալ այն սոսակալ անհարթութիւնները, որ սովորական են մեր լեռնաւ երկրում: Քանքանիները ազատ են հեղեղների և գարնանային յորդացած ջրերի վնասներից. նրանց մաքրելը և կանոնաւոր պահպանելը շատ աւելի գիւրիչ է և ավան առուներից: Քանքանիները ազգաբնակչութեանը կ'մատակարարեն միկրոքանիներից և վարակութեանից ազատ և ամառուայ շուգ կանաչներին զովացուցիչ սառը ջուր:

Քանքանիները կ'ունենան և մի ուրիշ խոշոր օգտակարութիւն: Հիգրոէլէկտրօկայանները ցանցը գնալով ծածկում է մեր երկրի բոլոր անկիւնները, շնորհիւ մեր երկրի արագավաղ զտերի և մանաւանդ Սևանի վիթխարի ջրամարի: Տեխնիկայի համար բաւական դժար լուծելիք խղիւրներից մէկն է, աուրբիններին այժ մատակարարող ջրի քանակը ըստ կարելոյն հաւասար չափերի մէջ պահպանել: Մեր երկրի լեռնային մասերում հասած քանքանիները ուռագման խիստ կարճ սեղան ունին. տարւայ մեծագոյն ժամանակը կարելի է և պէտք է քանքանիների ջրերը միացնել գետերի ջրերին և աուրբինների ջրապաշարի պահանջը կառնեն զարձնել:

Պարհրդային իրաւակալութեամբ վճռական կամքի արտայայտութեան օրինակները շատ են շատ: Հաւատում եմ, որ նոյն կամքի մէջբերումով, մեր երկրը կ'ծածկելի կենդանութեան տուող ջրի երակներով: Այդ կ'իստարիւր արդէն աւարտած առուները և զուրի կակայական ծրագրի առողման իրագործումով, որոնց լրացուցիչ կ'ցանկանայի որ միացնւեր նաև քարհիւրների սխտեմի գործադրութիւնը:

ՄԵՍԻՐՈՂ ՄԱՅԻՍՏՐՈՍ ԱՐԻՅԵՊՍԿ,  
(Շարունակելի) (8)

# ԵԿԵՂԵՑԱՊԱՏՄԱԿԱՆ

## ԳՐԻԳՈՐ ԿԵՍԱՐԱՑԻ ՊԱՏՐԻԱՐԲ

### ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ



Սակայն Կեսարացի աննկուն կամքի տէր անձ է: Յուսահատելի չի գիտեր: Չենք գիտեր ինչպէս, սակայն որոշ է թէ երկու տարի յետոյ, 1615ին, կը յաջողի գրաւել Կ. Պոստայ պատրիարքական աթոռը (Աղգապոստ, էջ 2351 և Գալէմքեարեան, Կենսագրութիւններ, Ա. էջ 16):

Այս ժամանակ արդէն կաթողիկոսական տաճառային քրիստոնէութեան հետեանքները զգալի դառնալ սկսած էին Արևելքի և մանաւանդ Հայոց մէջ:

Հայ եկեղեցականներէն ուժանք յարուստ յոյս տալ սկսած էին ոչ պիտի կաթողիկոսութիւն զանազան նկատումներով և ակնկալումներով:

Էջմիածնայ սպաշորէ կաթողիկոսը՝ Մելքիսեղեկ, այս ախար դէմքը Հայ եկեղեցիին, որ այնքան արատաւոր անուն մը թողած է իր շահախնդրութիւններով եւ դրամապշտական արարքներով, թիրեւ Հռոմէն ակնկալուած նիւթական ձեռնարկութեան մը յոյսով հաստատ դաւանութեան թուղթ մը կը հասցնէ Հռոմ:

1631 Յուլիս 25ին Լիվովի մէջ խմբագրուած վաւերագրի մը մէջ, որ հանրագրութիւն-բողոք մըն է, Լեհաստանի առաջնորդ Նիկոլ Թորոսովիչի դէմ (տե՛ս Zachariasiewicz-ի Wiadoruose O. Ormianach w Polsce. 1842. Lwov կամ Հայրենիքի ամսագրեր. է. տարի 1929 թ. 12), որոշ բնուած է թէ մեջքիսեղեկ պատրիարքն ու կաթողիկոսը, իսկական և զուտ Ռեյնար հրակալին Պոդոս Ե. Հռոմի պապին (1605-1620) ժամանակներէն, որ անոր մօտ դրկած էր իր նուիրակ Չափարիս վարդապետը, այն ժամանակի Կ. Պոստայ արևելակոստայ, ինչ որ կը հաստատի նոյնիսկ նոյն պատրիարք Մելքիսեղեկի շահանակն գիրքերու սպասած բողոքով:

Այդ բողոքին մէջ, որուն պատճենը կը գրուած է, Մելքիսեղեկ պապը կը ճանչնայ իր գլխաւորը և կը յայտնէ անոր հնազանդութիւն:

Երկրորդ պայացոյցը ասոր սա եր որ երք Մելքիսեղեկ կաթողիկոսը 1625ին եկաւ . . . Լիվով, նա ցոյց տուաւ . . . Գրիգոր ԺԿ. պապին (1572-1585) իրեն ուղղած բողոքը՝ գրուած շահանակն որմէ կ'երեւեր որ Մելքիսեղեկ ենթարկուեր էր պապին: Պապին այս բողոքը Մելքիսեղեկին հասուցած էր Ջուդայի աւագահեց Յովհաննէսը, որ . . . Մելքիսեղեկի կողմէ պատրիարքի դրկուած էր Հռոմ՝ պապին մօտ: . . . Երրորդ պայացոյցը մեր ակնկալներով յստի է, որովհետեւ երք նա այստեղ մեզ մօտ Լիվովի մէջ կախկոստներ կը ձեռնարկէր, անոնց հրամայեց կարգաւ Հռոմեական եկեղեցոյ հաստատ հանգանակը՝ այսինքն՝ այն յաւելուել, որ Մ. Հողին կը թխեր Հորին և Որդիին:

Այս թուղթին մէջ յիշուած Չափարիս պատրիարքը ժամանակակից Գլշոյիսան վանքի պատրիարքն է: Նոյն դպրոցին կը պատկանէր նաև Յովհաննէս Սուլ, Կեսարացիի հակառակորդը եւ մրցակիցը, որ նոյնպէս Մելքիսեղեկի կաթողիկոսէն կը սովորուածուէր և կը պաշտպանուէր:

Գրիգոր Կեսարացի աշարող այնոյան ընդդէմ մատուցած նշխարներէն, նախանձախնդիր Հայ եկեղեցոյ դաւանութեան անայայտ պահպանութեան, հաստատէն իր հաւատքին պիտի փարած ժողովուրդին օգնութեամբ, 1615ին պատրիարք դառնալէն յետոյ չափազանց կծու օճով գիր մը կը գրէ Մելքիսեղեկի կաթողիկոսին, վայն յանդիմաններով իր գեղձութեան, իր չարաշահութեանց և կողոպուտներուն համար, և մանաւանդ իր կրօնական համոզմունքներուն համար (Աղգապոստ, էջ 2352-53):

Մասնաւորապէս գիտքն գրուած ըլլալ կը թուի իր աշակերտներէն Մովսէս Տաթևացիի նկատմամբ Մելքիսեղեկի կաթողիկոսի բռնած ընթացքը: Անիկա կը հարածէ Մովսէս Տաթևացիի եւ կ'որդիւնէ վայն քարոզիչ:

Մովսէս Տաթևացի որ միշտ յարգալից

յարարերու թեան մը մէջ եղած է իր վարդապետին Գրիգոր Կեսարացիին հետ, և անշուշտ: այս պարագան ալ հաղորդած էր անոր, հրը արգիլուեցաւ քարոզելէ՝ իր գաւառաշէն և փրկուել որ ստացած էր Գրիգոր Կեսարացիէն զրկեց կաթողիկոսին: Մեկքիսեղեկ Գառնեցի ըմբռնեց սպառնալիքին սաստկութիւնը և վերադարձուց զանոնք: Կեսարացին իր պաշտպանն էր, սխալ անոր առջև կը պատկառէին թէ կաթողիկոսն և թէ շտրչիկներն (Հ. Ներսէս Վրդ. Ակիւնեան, ՀԱ. 1933 էջ 391), վասնզի Կեսարացին անձ և անմեղեկ հեղինակութիւն կը վայելէր արեւմտեայ րոյն (հռչ., էջ 172):

Գրիգոր Կեսարացի որ սպահովարար լսած էր այն անցքերը որ հոն հեռուն կը պատահէին, պաշտպան կը կանգնի իր սանին՝ Մովսէս վարդապետին և բարբ անոր պէս Հայ եկեղեցոյ հաւատարիմ հիկեղեցականներուն, և աներկելի ու համարձակ բողոքեց այն ամէն անհարգութիւններուն դէմ, որոնք կը գործուէին Արեւելքի մէջ և գայթակղութեան օտիթ էին Արեւմուտքի: Այդ յանդիմանագիրին մէջ որ Գրիգոր Կեսարացի յատուկ թղթատարով մը՝ Ասլան զայիրի ձեռքով հասուցած է Արեւելք, մասնաւորապէս ձեռքը նսեւ Մովսէս Տաթևացիի (որ զայն ստացած է 1615 Օգոստ. 27ին), խօսուած են բազմաթիւ գայթակղալից արարքներու, և Մեկքիսեղեկի անձնապէս կատարած բազմապիսի սպաշտորութեանց վրայ:

Հոն մասնաւորապէս կ'ըսէ թէ «մանաւանդ քան զամենայն մեծ չարիքն այս են, որ զո՞ր ձեռագիրն ետուր Փափուն, թէ ես Մեկքիսեղ կաթողիկոս Հայոց՝ իմ ազգիս վարդապետ՝ եպիսկոպոսով, եւ համարեմ ժողովրդով հնազանդիմ Հռոմայ եկեղեցոյն, եւ բնդունիմ գծողովն Քաղկեդոնի, եւ ըզտուարն Լիւոնի, եւ նզովեմ գիեւոսկորսն եւ համախոնք Տորս, եւ ասեմք ի Քրիստոս երկու բնութիւն եւ երկու կամք, եւ այս ձեռագրիս օրինակն Փափն գրել ե պատմայ գրով ե յուղարկել ե ի Լեւն. նոյնպէս ե յամենայն տեղիս, թէ ազգն Հայոց ի մեր հաւատան են զարձեռ, այլ ե ի Վանասիկ ե յալլ բազում տեղիս զիր ե գրեռ ե յըկեր. եւ այս գրոյս մեկն ի Համիթ ե Եկեր. ե զնուա մեկ օրինակն Աւեսիս կաթողիկոսն ե օտար ի հեթն, զի՞ օրինակն Համիցիս մեզ

էին յըկելի ասելով թէ տեսք տեսք գներ կաթողիկոսիս զիստատակուրիւնն, զայսպիսի հերձուածողն՝ զուր ի՞նչպէս կաթողիկոս կու ընդունիք. եւ զայս եկեալ բուրս մեկ ամենեւեամ ականատես եղեալ ընքեպատ:

Գրիգոր Կեսարացի, իր այս շքապանաց Կեսարացիան թուղթին մէջ (տե՛ս Գարեգին եպիսկ. Սրուանձտեանց, Քարտ Աշխարհ. 1885, էջ 280-293), որ կարեւոր վաւերագիր մըն է ժամանակին հայ եկեղեցոյ ներքին քայքայումն վիճակը ցոյց տուող ամէն մանրամասնութեամբ, Մեկքիսեղեկի արարքները թուելէ յետոյ կ'ըսէ՝ թէ այս ի՞նչ բան է ո՞ր արած բանն. զի կամիս երկրորդ եզր լինել, եզերիչ եւ իսնձարիչ Հայոց ազգիս, զի թէ իբրեւ գեղջ հովիւ հոգաւոր ե խնամող չես, վասն է՞ր որպէս զվարձկան ե իբրեւ զշար գազան պատանող լինիս բանաւոր հոսին Քրիստոսի. զի՞նչ կ'ուզես այս ողորմելի եւ տառապեալ ազգես Հայոց. է՞ր չես բողոք զիւրեանս յիւրեանց արհեստներեանն. զի թէպէս որ ազգս Հայոց մարմնով ծառայ են եւ արհեստ, այլ քրիստոնէական ուղղափառ հաւատովս ազատ են. հոգւով փարքս եւ հարուստ օրինակ ե պատուիրանով, բաւ այնք թէ ցանկալի է նա քան զոսկի եւ քան զականա պատուականս. եւ զու կամիս՝ որ աւազաբոյրեն կողոպտես ե մերկացուցանես յօրինաց քրիստոնէական ե յուղղափառ սուրբ հաւատոյս մերոյ զի թէպէս մարմնով տեսու ե ի շարձարանս եմք ի յայսմ աշխարհի առական քան զայլ ուղղափառ ազգս, բայց հոգւով ուրախ եմք, որ ունիմք ուղղափառ հաւատ քան զայլ ազգս աղօթիւք բազմաշարձար անհասակին, հաւատոյ Հօրն մերոյ Սրբոն Գրիգորի Լուսաւորչին: Եւ դու կամիս, որ զՍուրբ Լուսաւորչի ազգիս ուղղափառ սուրբ հաւատս գոր ընկալաք ի նմանք, զնորին հիմն քան զայլոյն ե որպէս է որպէս կարծես. զի մեկ ամենեւեամ հաստատուն կեանք ի վերայ ուղղափառ սուրբ հաւատոյս մերոյ ե նզովեմ ե անթմանեմք զնաւանգոսն Քաղկեդոնի սուրբ ժողովոյն ե զվարձանոսն ընդ Ֆրանկացն, թէ կաթողիկոս է՝ թէ վարդապետ, թէ եպիսկոպոս, թէ քահանայ, թէ իբրեւս ե թէ ուսմիկ աշխարհական, զի կաթողիկոսն ե առաջնորդ կարգեալ են վասն հաստատութեան հաւատոյ ե կարգաց ե օրինաց պահպանութեան, եւ ոչ թէ վասն քան զայլ զօրեւն

եւ խախտելոյ զնաւասս, զի մեկ ի ձեցշ օրինաց հասաստութիւն եւ կամ քիւրելոյն ուղղութիւն ոչ տեսաք, այլ մամաւանդ քե քակել եւ խանգարել. վասն որոյ մեկ այնպիսի հայրապետ եւ եպիսկոպոսս, առաջնորդ եւ Յուրիակ չեմ ընդունիր։

Եւ որպէսզի այս քննադատութիւնները բարձրովին անօգուտ չանցնին՝ անհրկա կը ներկայացնէ պայմաններ, որք կալիս որ ընդունիցեմք զեկ եւ հնազանդեմք հրամանի բո, զայն առաջին անկարգութիւնսն զորս գրեցաք, զայն չար սովորութիւնսն բարձ ի քեն եւ ըստ ասուածային օրինացն եւ կանոնաց շաւղացն զնա, և կը յանձնարարէ որ.

- Ա. Մէկ թեմի մը վրայ միայն մէկ եպիսկոպոս ձեռնադրէ։
- Բ. Նուիրակաները հրահանգէ որ բանագրանքներէ զգուշանան։
- Գ. Սրբոց նշխարները եւ Լուսաւորչի Ս. Աջը զարմնէ էջմիածին։
- Դ. Եթէ ստոյգ է որ պապին գիր չէ պըրած, գիրով մը հերքէ։
- Ե. Զաքարիա վանեցիկն բանադրէ իբր խորզատող պապին արուած գիրին եւ ասիկա շրջաբերականով մը հաղորդէ։

Եւ գիրը կը վերջացնէ սա սպառնական բանբերով. որք զայս առնեա՝ կու ընդունիմք զեկ որպէս զուղղափառ կաթողիկոս եւ քե ոչ, զու զիսեա։

Գրեկոր կեսարացիի այս թուղթին հետեւանքը ի՛նչ եղած ըլլալը չենք գիտեր, սակայն ինչպէս կ'երևայ՝ իր հակառակորդները կը յաջողին շուտով տապալել զինքը, վասնոր 1617-1618ին անհրկա կեսարիա էր(\*). Սիմէոն զպիր Լեհացի որ 1617-1618ին կեսարիա եկած է, կ'ըսէ թէ զգնացի մօտ Գրիգոր վարդապետն, առ որ կայցեալ էի, գոր սիրեալ զիս՝ յոյժ ուրախադու եւ սիրով ընկալաւ... Վարդապետն ունէր մեծ եղի որպէս քաղաք. եւ անդ քաղաւ անզաւ զնացեալ սխիշարեցաք՝ եւ ասին քե նորա կզին ջաններկու ազգ խաղող կայ» (ՀԱ. 1935, էջ 91-92).

1618ին Քէօթիակի գրուած ձեռագիրի մը մէջ, որ Յակոբ կպս. Քէօթիակացի՝ կեսարացիին աշակերտը գրել տուած է,

գրելը կը հաստատէ թէ ձեռագիրը գրուած է օի հայրապետութեան շնասն Տեօր Մեխիսեք կաթողիկոսին եւ վարդապետին իմոյ Գրիգոր յայ Բարտնակապետն կեսարացոյ» (Տաշեան, Մայր ցոյցոյ, էջ 778)։ Օրմանեան (Ազգագործ, էջ 2359) կը մտածէ որ այստեղ է թէ կեսարացի կաթողիկոս չէ եղած՝ սուտի Կ. Պոլսոյ պատրիարք պէտք է եղած ըլլայ։

Արդարեւ ժէ. զարուս սկիզբը տակաւին Քէօթիակի Կ. Պոլսոյ պատրիարքութեան մաս կը կազմէր եւ առանձին հովուութիւն մը կամ թեմ մը չէր (Դուրանչէ, էջ 182) եւ հասանկան է որ իբր այն յիշուած է Գրիգոր կեսարացի սոյգ յիշատակարանին մէջ։

Այդ պատրիարային իր պատրիարքութիւնը ձգելու թուականը ճշտուած կ'ըլլայ, քանի որ 1618ին կեսարիա էր։

ՓՊ.

ԿԵՍԱՐԱՅԻՆ՝ ԻՐ ԾՆՆԻԿՈՎԱԿԱՅԻՆ ՄԷՋ (1618 — 1625)

Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ իրեն կը յաջորդէ իր հակառակորդը Յովհաննէս Ուուլ, որ կը յիշատակուի 1620 և 1625 թուականներուն առջնորդ Կ. Պոլսոյ (Հ. Գալէմբարեան, Կեօթիոյ թիւեր, Ա. էջ 17; Օրմանեան, Ազգագործ, էջ 2361)։ Այս ժամանակամիջոցին (1618-1625) Գրիգոր վրդ. կեսարացի կը մնայ կեսարիա իբր առաջնորդ, որ, ինչպէս տեսանք, զինքն գտաւ 1618ին Սիմէոն Լեհացի։

1621ին գրուած է ցարդ անտիպ Յայաժաւուրքի մը յիշատակարանին մէջ(\*) կը կարգանք.

«Գրեցաւ սուրբ գիրս ի թվականիս Հայոց Ռ եւ Հ (= 1621) ի մայրաքաղաքս կեսարիա, որ ք Մաժեսկ, . . . . ի Հայրապետութեան մերոյ զն մեծ քարունակապետն Գրիգորին, որ ք պայծառ ջանն Հայաստանեայց ազգիս»։

Հաւանութն հոն մնացած է մինչև 1626, ռուբէն եկած է Կ. Պոլիս՝ գրաւելու հա-

(\*) Օրմանեան կը կարծէ թէ 1615էն 1619 Գրիգոր կեսարացի Կ. Պոլսոյ պատրիարք մնացած է, սակայն ինչպէս կը տեսնուի ճիշդ չէ։

(\*) Հ. Ներսէս վրդ. Ալիքեան ազնուօրէն տրամադրած է պատճէնը. Տրդատ Ապս. Պալեանի մէկ ձեռագրէն առնելով,

մար պատրիարքական աթոռը, Յովհաննէս Խոռը վանկում (Օրմանեան, Աղբաղաբաժ, 2375 և Գալէմքերտիան, Կենսագրա-Բէալեր, էջ 19 և 24): Այս գրաւումը կատարած է օգոստոսիում այն մեծ յուզումէն՝ զոր տառաշարուց Միլիթիսեղիկ կաթողիկոս 1624ին գալով Կ. Պոլիս արագում անստակօք նսխուկոպս անուանօք ևս սուս փարսոպիտի իւր համախոհօքն, գոչելով որպիս կալիւծ, և Զախարիէն օճանկալութեանքն ևս իրիկուն շինկելովն, սկսան անխիտ ուսիչ ի պսս սուրսն զձեռ և զգիւնի՝ յայտնի հրապարակաւ . և զոչ ուսողն անարգիին, որ բազում ժամանակաց հեճ օրինատր ևս ճշմարիտ վարդապետն մեծ վշօք և դառնակոյսի ևս կարի կտեր հին և բարձեր թ միջոյ. և այլ բազում անստակութիւնք և հերձախտութիւնք (Գրքաւաչք, 265):

Աստուծո ատենելով մերասացի Ներսէսն որ ճշմարտութեան իրաւանցն Աստուծոյ շատազով էր ևս արքայս, նա ի ժամանակին աշողնելովն Աստուծոյ անյ եղև մեզ զօրալիզն, որ քանակալիս ևս բազմաւթիս ժողովրդով հազի կարացաք ցունէ զյար ժողով նոցա ևս հարածակսն ստնէ ի քաղաքին մեծեք (Գրքաւաչք, անդ: Բիւրաճգիւն, 1907, թ. 3424: Աղբաղաբաժ, 2369-70, 2374):

Գրիգոր վրդ. Կեսարացի տայ միջոցին Կ. Պոլիս չէր, և թէ ոչ չէր կրնար անգործ մնալ և Դարանաղցի պէտք էր որ զինքն ալ յժէր:

Մեղիթիսեղիկ կաթողիկոս կ'երթայ Լեւաստան (1625), սակայն Յովհաննէս Խոռը քիչ մը ատեն ալ կը սովորայ Կ. Պոլսոյ աթոռին վրայ, մինչև որ Գրիգոր Կեսարացի հետը առած Մինաս վրդ. Կարնեցի, ինչպէս նաև Երզնկացի Պակեամբուրի Զագ մականունանեալ Յովհաննէս եպիսկոպոսը, Կ. Պոլիս կուգայ 1626ին և կը յայտնի Յովհաննէս Խոռը՝ որ անժողովրդական գործած էր իր կաթողիկական միտումներուն համար, տապալել և մինչև Պրուս փախուցընելով զայն՝ ինքը բռնութեամբ՝ առանց հրամանի յափշտակել Կ. Պոլսոյ աթոռը (Գրքաւաչք, էջ 186), և թէ կարելի է հասարկածայել կակառակորդ պատմագիրին խօսքերուն տառական ճշգրտութեանը:

ՃԹ.  
ԿԵՍԱՐԱՅԻ ԼԻՆԳՎԵՐՈՐԻ ԱՆԿՈՒՄ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ  
ԼԵՂԱԶԱՅՈՅ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՄԷՋ ԻՐ  
ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
(1626-1629)

Գրիգոր Կեսարացիի այս հինգերորդ անգամի պատրիարքութեան մասին գործեալ միայն Դարանաղցին է որ մասնակի ծանօթութիւններ կուտայ, իր ծանօթ ժողովրդապետութիւնը խտանելով զօրծին:

Իրր թէ անիկա գլացած է 1628ին իր աջակցութիւնը այն Լայերուս՝ որոնք կը ջանային Կէօմիսի կի Ս. Նիկողայոս եկեղեցին (էպիսկոպոս Գաբուրի մօտ, այսօր Բէֆէլի շտամի) թուրքերու ձեռքէն ազատել: Գարանաղցի կ'ըսէ թէ անիկա սաստած և նախատած է և չէ թողած որ անոնք դիմումներ ւնեն:

Իրեն պէս Յովհաննէս Խոռ ալ անփոք իզած էր այս մասին, վասնզի երկուքն ալ իրարու հետ կը մարտնչէին պատրիարքական աթոռին համար, որով ուղղին մէջ մեծ յուզում կը տրեր:

Ըստ Դարանաղցիին «Նայ կու զնա մոտ առ Կեսարացի Գրիգոր վարդապետն՝ որ յայնմ ժամանակին եկեալ էր Կեսարիայ, իբր քի խրատ ևս և զիւրոքիսն ստեղծ նոցա: Իսկ նա փոխանակ օրհնելոյն և խրատելոյն՝ կու սաստ ևս կու յանդիմանէ զնոսա անգործ, քի դոպ ո՞վ էք, որ այդպիս քալ կու սեռուփ լուսնիներն ևս սեփական տեղացիին կը հոգան, ևս այլ ցուրտ բունք շատ կ'ստի ևս կու յուսահատէ զնոսա . . . ի յայտնի թշուառական տեսնին ինքն, այսինքն Գրիգոր վարդապետն, և կու ինչն քալ փոք չեն անոնք ոչ եկեղեցականաց և ոչ քրիստոնէից աննախնի սոցն ևս անխիտար վշացն: Այլ ևս առանց սղմուկ ևս խոռոպիս կու արխանն ի մեջ ազգիս Լայոց յարագս Պարսիարց ստեղծոյ, Բանգի Գրիգորս այս մարտ եկեալ էր հետ Յովաննիսին մինչ զնա փախուցեալ էր ի Պրուսս ևս ինքն սիրեալ էր բռնութեամբ առանց հրամանաց արժունեացն» (Գրքաւաչք, էջ 186):

Գրիգոր Կեսարացի չի գիտցուի որ ինչ պատճառներէ թիւարդում՝ այս չիփոք կացութեան մէջ ճի տեղի իւր եղեալ . . . զեկնակցի Յովաննի Պակարուր Զագն» կ'երթայ ճի Լեւոս աշխարհն» (Նոյն, էջ 186):

Հաւանօրէն կ'երթար հալածելու Մելքիսեղեկ կաթողիկոսը, օրուն զէմ բունն ասելութիւն ունէր:

Ինչպէս ըսինք՝ Մելքիսեղեկ կաթողիկոս վտարուած և հալածուած էր Հայ Եկեղեցւոյ կարգերուն և կանոններուն նախանձնխնդիր եկեղեցականներու և ժողովուրդին կողմէ, Կ. Պոլիսէն անցած էր Լեհաստան (1625):

Հոն այս ապաշնորհ կաթողիկոսը իրեն չափ անարժան և գորշիկն արեղայ յը՝ Նիկիոյայոս Թորոսովիչը՝ հակառակ ժողովուրդին բողոքին՝ գաղտնի եպիսկոպոս կը ձեռնադրէ Լեհաստանի Հայոց:

Մելքիսեղեկ կաթողիկոս կը վախճանի Կամենից 1627ին (\*):

Նիկիոյ, որ արդէն կաթողիկ էր, սկսաւ ամէն կեղծիք և բռնութիւն ի գործ դնել ժողովուրդը ևս կաթողիկ դարձնելու, հակառակ անոր բուն ընդդիմութեան:

Գրիգոր վրդ. Կեսարացի 1627ին Յովհաննէս Խուլը աթոռէն տապալելէ յետոյ՝ փութաց Լեհաստան (\*\*):

1627 Գեկտեմբերին (\*\*\*) կը հասնի Կամենից և իբր լրտես կ'ամբաստանուի Նիկիոյ եպոս. Թորոսովիչն և 1628ի սկիզբը կը վտարուի Պուլդամնայ երկիրը, օւրիւ Կեսարացին Նիկիոյ զէմ բանադրանք արձակեց և վերադարձաւ Կ. Պոլիս:

Վերոյիշեալ 1631 Յուլիս 25ին Լճովի մէջ խմբագրուած վաւերագրիին մէջ, որ ինչպէս ըսի բողոք մըն է ընդդէմ Նիկիոյ Թորոսովիչի՝ ուղղութեամբ Մովսէս Տաթևացի կաթողիկոսին, կը խօսի Կեսարացիի առաքելութեան վրայ ի Լեհաստան, առանց խօսելու անոր վտարումին մասին:

(\*) Օրմանեան (Ազգապատմ, էջ 2377) մահուան Բուականը դրած է 1626 Ապրիլ 1, հիմնուելով Դաւրիթիսի վրայ: Աւելի հաւանական կը թուի 1627, որ կ'ընդունի Գալէմբարեան (տե՛ս Կենսագրութիւններ, էջ 29). ուրիշներ 1628ին կը ձգեն:

(\*\*) Հ. Գրիգոր վրդ. Գալէմբարեան (Կենսագր. Ա. էջ 29) կը գրէ թէ նախ Էջմիածին գացած է եւ անկէ Լեհաստան, սակայն այս մասին ուէւ ապացոյց չկայ: Հ. Արիսեան (ՀԱ. 1934, էջ 8) կը կարծէ թէ ուղարկուած է Մովսէս բլուսարարէն ինչպսոտ Էջմիածին նուրբակութիւն ընելու, սակայն այս մասին ալ փաստ կ'այ:

(\*\*\*) Դարձեալ Գալէմբարեան զայն Կամենից ցրտ կուտայ 1629ին, ինչ որ շատ հաւանական չի թուիր:

Նիկիոյ եպոս. ձեռնագրութեան վրայ խօսելէ յետոյ, աչառ չսնցած, . . . Կամենից եկաւ Կեսարացի արխիեպիսկոպոս Գրիգոր վարդապետը որ նոյնպէս ոչ պակաս պատճառ եղաւ մեր այս երկրապետութեանը: Սն մեր եպիսկոպոսին (Նիկիոյի) զսաւ Կամենիցի մէջ, կրուեցաւ անոր նախն արչ պատճառներով, առանց դասի դասապարտեց զայն եւ ուղարկեց անոր շատ խիստ արտայայտութիւններով գրուած թանաքարների թուղթ, իսկ ինքը մեկնեցաւ իր թեմը: Եւ այդ ըրաւ առանց նոյնիսկ պատիւարի մը զրկուած նուիրակ ըրալու, եւ առ հասարակ առանց ռեւէ մեկին շիպորտի մը ունենալու, քանի որ պատիւարի մը արտը Մելքիսեղեկ կաթողիկոսի մահուան պատճառով քափուր ետ:

Առաքել Դաւրիթիցի, որ ժամանակակից է, աւելի մանրամասնօրէն կը խօսի Կեսարացիի Լեհաստան ճամբորդութեան վրայ և կը հաստատէ անոր վտարումը այդ երկրէն: Ան (տե՛ս էջ 366-367) զէմին սկզբնապատճառն ցոյց կուտայ Ռոմփրիոս անուն նորընծայ արեղայի քառասունքը 25 օրուան մէջ լրացնելու փափաքը, որ Նիկիոյ եպոս. և այլ ամանքն ունեցած էին և որոնց Գրիգոր Կեսարացի ստատիկ ընդդիմութեամբ էր՝ իբր կանոնապահուցիչ թիւն:

Հակառակ ասոր սակայն Նիկիոյ եպոս. 22 օր յետոյ քառասնօրեակի պատարազը մատուցանել կուտայ այդ արեղային և որպէսզի Կեսարացիին իբ գործերուն միջուկ մտնուէն զէմ մաքառի, առտուն կանուխ կը փակէ այն եկեղեցիին զուռնիքը ուր իջեանած էր Կեսարացի: Ասիկա ասիթ կ'ըլլայ պայքարի:

Կեսարացի խորապէս ազդուած կ'ըլլէր ուր այստ այն եկեղեցիներ պարսկական ըրալայ: Այս կերպով կը նորովուր նաև Նիկիոյ, որ կը փակէ նաև նորընծային պատարազէն յետոյ այդ եկեղեցիին և առանց եկեղեցիի կը ձգէ Մուսնդիկ տօնական օրերուն քաղաքը:

Կեսարացի իր թեմ անկող, կամապաշտ եւ խստապահանջ, յնկած եր իր հոշակուած անխտրեան վրայ, կը սսուտ, կը յանդիմանէր վարդապետական բողոք ի յիսմամբեանք, առանց անդադարանալու թէ կը զտուի զնկական հողի վրայ եւ ոչ ի Թուրքիա (Հ. Ն. Արիսեան):

Իր նախանձախնդրութեան զէմ, իբ ազգային եկեղեցւոյ նկատմամբ տաճած

սիրոյն արգաստիք իր աւելեցած արգար պայթիւնի գէժ հոգար կը կանգնէր Նիկոլի ազատտ նկարագրէր: Նիկոլ՝ կենսարացին կ'ամբաստանէր իրր լրտես:

Նիկոլ օգնաց առ վրայն կամենից ֆաղափն, որ ի մեծ իշխանին վերակայուտ հր կտրգեալ կամենից ֆաղափն, որուն անունն եր Լուֆաշ, խօսեցաւ նպիսկոպուն ընդ ննա եւ հաւանեցոյց զնա զի արգելցի գվարդայսէն, եւ մի քողցի զնա յյրոյժ եւ կամ յայ լաղափս, այդ ի կամենից ֆաղափն կարճուցի զնա, յն զտանալ ընդ իւր նկեալ ամուսնալորն եւ զնա յայդ աշխարհ: Վասն որոյ եւ Լուֆաշ անուամբ վոյրն առաջնաց պատգամս առ վարդայսէն անելոյլ քե մեծ իշխանն մեր քողք ք ուղարկել մեզ քե, այդ վարդայսն, որ ի քուրֆի աշխարհին նկեր ք, շարտս(\*) ք նկեր, հեռանն լկայ որ ի ֆաղափից նշանն, մի քողոյք որ երբայ, քե ոչ ձեր գրտին կ'երբայ. եւ այսպիսի քանիսք արցիկցին ի զնաւոյ գվարդայսէն եւ վարդայսէն կուր անկին իրեւ ի յիպանոյ: Ապա, արք ունակ քարեպաշտն ի ժողովրոյց ֆաղափն մատնուս առ վոյրն եւ ծանոցին զանկեղութիւն վարդայսէնն ննա, ապա քե հրամանն եղաւ վարդայսէնն, զի եղեալ զնացք ոչ քե յյրոյժ այդ յիպ ի յն՝ ընդ որ նկեայն եր եւ վարդայսէնն եղեալ ի կամենիցոյ եւ կին ի Բողոյրանն եւ ի յճուտուհի, եւ ի ծանուպարհին գրեաց զիւ քանալրանաց, նզովից եւ կտպանաց ի վերայ Նիկոլիին եւ առաջնաց յյրոյժ եւ Նիկոլն ոչինչ հողաց ի կողմանն քանաղարանացն, այդ կայր ի կարգի իւրուն եւ ի ֆանանայադոճութեան: Ի այց ֆանանայ եւ ժողովարոյն այնք՝ որք յառաջնէ ներհակ էին Նիկոլին, ի քերան առեալ խօսեին. նա եւ յերեսաց ընդդիւն քերհին ննա, գտաւ ունակ ներհականային եւս, եւ օր յաւուր գորանային ներհակն ի վերայ Նիկոլին: Սյն եւ Կրիգոր վարդայսէնն, զամենայն որպիսութիւն անգուածոցս այսմիկ, այդ եւ զանողայ վարս Նիկոլին քողոյժ ծանոց Մովսէս կարողիկոսին ի սուրբ Էջմիածին, եւ ինքրեաց ի նմանն զի եւ նա քարճր հրամանաւ սուրբ Էջմիածին եւ կարուղիկոսական իշխանութեանքն քանաղրեաց զՆիկոլ նպիսկոպուն եւ Մովսէս կարողիկոսն եւս գրեաց զիւ քանաղարանաց եւ առաջնաց ի վերայ Նիկոլ նպիսկոպուն, եւ այսու պատճառաւ աւաւել եւս գորացան ներհակն ի վերայ Նիկոլին եւ ի նախդիւն գնաց (Ա. Գ. լէժեշ, էջ 368-370):

Կենսարացի բանադրանոց զիրը անար իրարանցում պատճառնց ի Լճով, որ ժողովարգը զգզու էր արգէն իր առաջնորդն:

Գրիգոր կենսարացի այսպէս խոսովութեան մէջ ձգելով Լեհաստանի հայերը կը գտնուար ետ, սակայն չէր կրնար տիրանալ Կ. Պոլսոյ աթոռին, վասնդի իր բարակայտութեան միջոցին զարձեալ հակառակորդները զօրացած էին և Զաքարիա Վանեցի տիրացած էր 1629ին(\*) Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռին (Գալէճքեարեան, Կենսարացի-Նշանէր, էջ 56):

Այս անկումին մէջ թերեւ Պալաթի եկեղեցւոյն շինութեան մէջ իր տեղապահներուն բռնած զիրքը մեծ դեր կատարած է: Երբ Արիստակէս վրդ. Սարբերդցի կը յաւոզի Պալաթի Ս. Հրեշտակապետ յուսնական փոփ եկեղեցին ձեռք բերել սիրկին նախանն կու շարժեն Կեսարացոյն կողմանն ունակ չարահնար անձինք, այդ եւ Էրզրումցի Միլեաս վրդ. եւ Երզնկացի Պիկրատեր Զագ Յովնաննեկ նպիսկոպուն որ ի սեղի իւր եղեալ եր զաւ Կեսարացի Գրիգոր վարդայսէնն, եւ ինքն ի Լեհաց աշխարհն եր զնալեալ: Եւ ախ իրաւ սեղապակն զինելով Կեսարացոյն, հակառակ էին Արիստակէս վարդայսէնն եւ անկեայն ֆանանայից եւ ժողովրոյցն Պարսբոց, արցիւն կամելով զմտքանութիւն նոցա եւ զշինութիւն եկեղեցոյն խափանելով եւ զԱրիստակէս վարդայսէն հաշտական առնելով, որ ողեալ կայր ի Ղալսիայ ի նոցանն եւ նոցին չար խորհրոցն (Գալէճքե, էջ 168):

Այս պատճառով կը զօրանայ զարձեալ հակառակորդները կողմը և Կենսարացի տեղապահները վստահութիւն Զաքարիա Վանեցի կը գտնուար:

Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ

(Շարունակելի) (9)

(\*) Ըստ Օրմանեանի (Ազգապատմ, էջ 2395) 1628ին:

(\*) Շառուս = լրտես:

### Հ Ա Ր Յ - Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ի Ք

ՀԱՒԷՊԵՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԸ ՀՏՏԵԻՆԱԼ  
ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՂՐԿԷՒ ՄՆՁԻ.

- Ա. Ինչո՞ւ մեր Եկեղեցւոյ մեջ Յովնանու Յայտնութիւնը չի կարգացուիր:
- Բ. Ինչո՞ւ հիւանդաց իւրով օժուրիւնը զանց կ'ընենք:
- Գ. Ինչո՞ւ Ասուած մարգարեներէն միայն Յեկկիլը «Որդի Մարդոյ» կը կոչէ:
- Դ. Ինչո՞ւ Առաքաւորաց Պահոց օրերուն Ս. Գրոց ընթերցուածք չունինք:
- Ե. Ինչո՞ւ մայրասօսակներու միջոցին 'Հարց, ին՞ գործասուք չենք կարդար:
- Զ. Ինչո՞ւ «Փառք ի բարձունս»ի երկրորդ մասին տօհմետակ Տէր ուսո՞՞նք երիցս կը կրկնենք:
- Է. Ինչո՞ւ ձեռու երեք ժամերուն մեջ Եւրոպական երեք անձերը իրենց սովորական կարգով չեն յիշուիր:

Կը պատասխանենք համառօտի .

Ա. Վճայանութիւնը բոլոր Եկեղեցիներու Ս. Գրոց կանոնին մէջ անկէն ուշ տեւած գիրքերէն մին է: Նախական Եկեղեցին ստեղծելու խրոչում ունեցած է անոր շատ խորհրդարանական մթնոթնէն: Այսպէս է եղած մեր մէջ ևս: Թէեւ Ե. զարէն Թարգմանուած է անիկա հայերէնի, բայց կ'երեւի թէ այդ Թարգմանութիւնը մասնաւօրէի մը կողմէ եղած էր իբրև անձնական հետաքրքրութեան կամ ուսումնասիրութեան զօրծ: Ինչպէս բաւական հին զարբերել եղած էին անօժանդակ գիրքերու ալ Թարգմանութիւնները: Ասոր համար է որ այդ ինչ Թարգմանութիւնը՝ չգործածուելուն պատճառաւ ընդհանրացած չըլլաւով, գրեթէ անյայտացած էր, եւ ներքէս լամբրոնացի երկրորդ անգամ Թարգմանեց պայն: Համբարնայիտի զայն մեր մէջ ևս կանոնականացանելու ջանքին աղբիւնէն այն եղաւ որ այնուհետև միշտ մաս կազմեց Հայ Աստուածաշունչին, բայց չի գրուեցաւ Եկեղեցական ընթերցուածներու կարգին մէջ: Բայց Եկեղեցւոյ մէջ չկարգացուելու չափանշանը թէ չենք ընդունիր անոր աստուածաշնչականութիւնը. մեր ընդունա՞ք, Աստուածաշունչը իր ամբողջութեամբը չի կարգացուիր Եկեղեցւոյ մէջ: Իսկ զան գիրքեր ալ որ թէև կը կարգացուին Եկեղեցւոյ մէջ, բայց արտաքոյն են Ս. Գրոց կանոնի: Պարտաւի ժողովին մէջ (Ը. զար) ուր վերջնական պայտանականացաւ Հայ Աստուածաշունչի կանոնը, յիշուած է Յայտնութեան գիրքն ալ: Մեր այժմ ունեցածը Համբարնայի Թարգմանութիւնն է: Յետոյ է որ վերագտնուեցաւ հին Թարգմանութիւնը:

Բ. Հիւանդաց օժուրեան իւրին հին կանոնը մեր մէջ վաղուց չէ գործադրուած՝ հաւանաբար հոգեխօսական եւ ընդխօսական պատճաններով, այսինքն հիւանդին երկիւղի տպաւորութիւն չը տալու եւ մարմնապէս անհանդիտ չընելու համար զայն. ու բաւական համարած է խորհուրդը գործադրել ենթակային վրայ, աղօթելով միայն և ձեռք զննելով, ըստ պատուելի առաքելային:

Գ. «Որդի Մարդոյ», Սուրբ Գրոց լեզուով կը նշանակէ մարդկային բնութիւն ունեցող էաւոր, մարդը, իբր այդ՝ եզակին է եւ որդիք մարդկան յոնակիրին: Ոչ միայն Եզեկէիէի, այլ Ս. Գրոց բոլոր մատերուն մէջ գործածուած է ան այդ իմաստով: Եթէ, միւս մարդարէները, իրենց գիրքերուն մէջ, Աստուծով կամ ինքնին՝ առանց որչէզիս կոչականի կամ պարզապէս իրենց անուշով կամ իրենց Հօր կամ Յնչղալայրին անուշովը կ'անուանուին, իսկ Եզեկէիէի միշտ «Որդի Մարդոյ» կը կոչուի: Երբեք արքայ մեկնարանութեան Բարկայ պէտք չէ ըլլայ, և առ առանելն պէտք է ստանանշուի իբրև գրքին հեղինակին սեպական մատկարանութիւն: Իսկ այդ մակդիրին Յիսուսի համար եւս գործուած պարզային՝ իր մարդկային բնութեան ստեղծուէն նկատուելով՝ ան կը նշանակէ նկատարեալ գերազանց մարդը, ինչպէս աստուածային բնութեան ստեղծուելով ըսուած «Որդի Աստուծոյն» կը նշանակէ կատարեալ Աստուած:

Դ. Աստուածաշունչի և մասնաւորապէս Աւետարանի ընթերցումը Եկեղեցական պայտանուանքի միջոցին՝ կը նկատուի պատմութիւն հոգեկան բերկանքի եւ հոգեւոր միխիթարութեան: Ասոր համար է որ մեծ տօնական օրերուն յանախալէպ կը լինին այդ ընթերցումները, ու Յիւնանց օրերուն ևս, մասնաւորապէս առաւուս երեկոյ, առնուազն չորս հատուածներ կը կարգացուին Աւետարաններէն: Այդ բերկանքէն միխիթարութեան Եկեղեցին կը թուի կամաւ զբրկել ինքզինքը չկարգաւորվ Աւետարան՝ բուն ապաշխարութեան, ինչպէս Քառասորդաց, ևն: օրերուն, եւ բաւականաչափով միմիայն ապաշխարութեան երգերով և ընթերցուածներով: Իսկ առաջաւորաց պարզի օրերուն, որոք պահեցուցութեան ամենին կանոն հաստատուած են և մենէն խիտ պահուած օրերն են մեր մէջ, նոյն այդ դիտումով չընեն Ս. Գրոցական ոչ մէկ ընթերցում:

Ե. Հարցին գործատան առաւուտուն երգուիլը հետևանքն է այն սովորութեան, որով ի նուսն այդ միջոցին կը կարգացուէ «Օրհնեալ եւ Տէր» իոխիս համապատասխան մարը. «Օրհնեցե՛ք ամենայն գործք Տեսուն յՏէր»: Յետոյ այս սովորութիւնը վերացաւ, բայց գործատան երգեցունքը մնաց: Իսկ նախաստեղծին՝ որովհետև փոխը ընաւ իսկ չի կարգացուիր, գործատունն ալ չ'երգուիր:

Զ. «Փառք ի բարձունս»ի երկրորդ մասին մէջ, «Օրհնեալ Տէր, ուսո՞՞ ին՞ զարգարութիւնս քո» ըստ խորով Անձնացի երիցս կը կրկնուի, նման սերով լեզու արքայացութեան, ի զէ մտ Որդ-

ւոյն Ատառձոյ, որ արգարութիւն եղաւ մեզի և արդարացուց մեր մեղացարտ ընտելութիւնը խաչին միջոցաւ, իր ուղտմութեան ձրի շնորհներովը։

Է. Օրոտան ինք ժամերգութիւններէն իւրաքանչիւրը ուղղուած է ի դէմս Երբորգութեան Երեք անձներէն մէկուն, իւրաքանչիւրին երեքական բաշխումով։ Այդ յատկացումները կատարուած են իւրաքանչիւր անձի խորհուրդին եւ ժամերգութեան պարագայական էտութեան միջև նկատուած անբաձանշութեան մը կամեմատ։ Ասոր կամար է որ ժամերգութեանց ընթացքին նետ Երբորգութեան անձներուն սովորական կարգը չի պահուիր միշտ։

ԽՄԻԲ.

### Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

#### Ն Ե Ր Ք Ի Ն Է Ո Ւ Ր Ե Ր

Անչեայ փետրուար ամսուան ընթացքին, Ս. Աթոռայ Զեօրլեց Ժողովը եօթ, իսկ ետօն. Գեո. Աեօսուրը՝ չորս անգամներ նիստ ունեցաւ։

● Գշ. 20 Յուն. — Ս. Շննդեան Մեռելոցին առթիւ Ս. Գատրիարք Երբորգուց Մայր Տաճարին մէջ, նիւթն էր մարդոց կամար ծնող Ատառձոյն կաւառքովը մեանող մարդոց կեանքին խորհուրդը յայտնուէր կանգ առաւ զքրիստոնէական նաւատարութեան գաղափարին օրրութեան առջև, մէկն ցուցնելով մեր կեանքին իրիւկ մեծագոյն մէջ զօրութիւնը։

— Կէտօրէն առաջ մեր Գատրիարքարանը շըւորանորական այցելութեան եկան Անկիթքան և Ռուս Եղիսիոցոյնները, լատին Գատրիարքարանէ փոխանորդ Եղիսիոցոյնը, ընկերացող վարդապետներով. Ֆրանչիսկեանց Մեծաւորը և Առաջիկային Ժողովը, Ղպտայ Փոխանորդն ու վարդապետները, Մարտինիերոս Մեծաւորը, Կաթողիկ Յունաց Մեծաւորը, Հայ Կաթողիկեանց Մեծաւորը և ի վերջոյ Յունաց, ընտրեալ Գատրիարքը Տ. Տիմութէոս Սրբազան իր միտողականներով, եւայլն։ Ս. Գատրիարքը, լուսաբարպէտ Սրբազանէն և վարդապետներէն շքիպատուած, ընկերանց աւանդեալ Գատրիարքարանի մեծ Գահայիկին մէջ պատշաճ պատուատրութեամբ։

● Եր. 23 Յուն. — Ս. Գատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Տ. Գեօղի վրդ. ի և Տ. Աթոռան Արեւիպոյ, ի՛նչու Յողպէ, ուր մնաց երկու օր, այս առթիւ նա զարգուց Ս. Շննդեան տօնին առթիւ և օժտւոր կատարեց վեմ-քարին նորահաստաւ սեղանի մը. զոր կողմ Ս. Յովհ. Կարպատ-Մկրտիչի Այցնչի նաև Ռուսաց Ս. Տարիտա (== Այծմմիկ) վանքը, ուր կը ցուցուի Գոթը Է. Առաքելոցի մէջ պատուած Գթութեան Բայբին գերեզմանը։

● Կիր. 24 Յուն. — Ս. Գատարգը ժառուցուեցաւ Ս. Յայրոյս Մայր Տաճարին մէջ,

ուր զարգուց Տ. Զգօն վրդ., Ս. Շննդեան տօնին առթիւ ծանարանով հոգեւոր զարթմանց կամ վերածնութեան կարգին վրայ, որուն կը նախաորոշութիւնը մասնանշեց Թիտուսը ապրելուն մէջ։

● Գշ. 26 Յուն. — Յիւուօր Ս. Շննդեան առթիւն և Անուանհոյութեան տօնին առթիւ Ս. Գատարգը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, ուր առաւտուան Հըրաշափարի Ռափորթով մուտ գործեցին Ս. Գատրիարքը և Միսարանութիւնը։ Լուսաբարպէտ Տ. Մեարոպ Սրբազան Ս. Գիրեղմանին վրայ պատարագեց կանգնելու Գարգից Ս. Գատրիարքը, որ նիւթ առնելով Փրկչին անուան տօնը իր Գիրեղմանին վրայ անհոյսաւորելու կայիկան այս սովորութիւնէն, խօսեցաւ անուանի և արժանիքի առընչութեանց մասին. բացատրեց թէ՛ ոչ թէ անուան է որ կը բարբաջնէ արժանիքը այլ, կակաղարմար, արժանիքը՝ անուանը, և մեծ արժանիքները անօք են, որոնց անուանիցը զիրենք կրող անձներուն անհետացումէն ետքն այլ, կը տեսնու պատուութեան մէջ փառքով կամ յիշատակարանի մը կամ գերեղմանի մը վրայ անհանաւորով։ Ու, իբր այդ, աշխարհի վրայ կնշած անուաններուն անհուն մեծն ու սուրբը մասնանշեց Թիտուսի անուանը, ստրան առջև ծառնկի կողպան լուրջ երկնասորները և երկրաւորները. և այլն։

● Կիր. 31 Յուն. — Մայր Տաճարին մէջ զարգուց Տ. Սերովյէ վրդ., քնարանէն էր զՊարտ է ձեզ վերտօտին ծնունդն, բացատրեց թէ վերտօտին ծնունդը կը կայանայ մօքի և զգացումի կրօնական փոփոխութեան մէջ, վասնից մարդուն մէջ թուն մարդը խորհուրդն ու զգայցուն է իսկ այդ փոփոխութիւնը կրնայ կատարուիլ երբ մեր հոգեկան կեանքին մէջ տեղ բռնին Քրիստոսի պարգափարները և ոչորուեցները, օրոքը վանելով մեր ներսէն ամէն գէշ մտածումներ, մեզի ճանշուցնիլ կուտան մեր կոշտումը և կ'առաջնորդեն ըզմեզ մեր զերջագոյն նպատակին, Ատառձոյն։

● Կիր. 7 Փետր. — Ս. Գատարգը մատուցուեցաւ Ս. Յարութեան վերածնատան մէջ, ուր զարգուց Տ. Եղիշէ վրդ. քնարանէն էր. ձեւ ծանրիթը զնշմարտութիւնն, և նշմարտութեան ազատեացը զնեղո. բացատրեց թէ նշմարտութեան թէ՛ իրեն կրօնէսը գիտութեան և ի՛լ՝ իրեն լոյս յայտնութեան, ազատարար ներգործութեան մը կ'ունենայ մարդուն թէ՛ մօքին և թէ՛ կեանքին և մարդկային թէ՛ ընկերային և թէ՛ բարոյական կեանքին վրայ, Ասոր կամար է որ ազատութիւնը իր լուսազոյն և բաշխարջն նպատակով իրականացած է ամենին այն իսկ այն կրօնքին — զքրիստոնէութեան — հովանիին տակ, ուր գիտութեան և յայտնութեանը կրթութեւն ստրանած են, այսպէս զիւրացնելով մարդուն ազատումը նախապաշարուններու եւ բռնութեանց շղթաներէն։

● Եր. 13 Փետր. — Ս. Գատրիարքը, որ տանական յոգնութեանց և ցրտառութեան կետուանքով 15 օրիկ է ի վեր անհողին էր ինչպէս, բժշկաց յանձնարարութեամբ այսօր երէքով

մեկնեցաւ, կազգուրուածի ոգափոխութեան նըպատեցաւ, ընկերակցութեամբ գաւազանակիր Տ. Արթուռ Արեղայի:

● Կիր. 14 փետր. — Մայր Տաճարին մէջ քարոզէ Տ. Հայրիկ Վրդ. բնաբանն էր ՎՃԻ եռ յերկնից, ոչ զի զիսն իմ արարից, այլ զիսն աշարիկ, որ առաքեացն զիս: Բացարքէ թէ Աստուծոյ կամքն էր մարգկայսին փրկութիւնը միայն Այգ կամքին գործադրութեանը գերազանցօրէն նուիրեց մեր Փրկիչն իր անձը, զայն աւնայնացնելու: աստիճան: Ամէնք ալ, իրեւ ջրիտանեայ, պէտք է ազգունիք անոր օրինակէն՝ ինքնինքնիս բովանդակուէն նուիրելու համար փրկութեան սուրբ գործին, նախ մեր անձին փրկութեան գործը արդիւնաւորելով մեր իսկ կեանքին մէջ, ու յետոյ մեր փրկութիւնը ծառայեցնելով որպէս միջոց ուրիշին փրկութեանը:

— Տ. Մեծարյ Սրբազան, Պր. Լեւոն Գեորգեան և Պր. Կարապետ Նուրեան այցելեցին Ս. Պատրիարք Հօր Երէքովի մէջ:

● Դշ. 17 փետր. — Տ. Տիրան, Տ. Սիւն, Տ. Տիրայր Վարդապետք և Տաքթ. Ն. Նաչկեան այցելեցին Ս. Պատրիարքին Երէքով:

● Դշ. 17 փետր. — Իմացանք թէ Անգլո-թուրանի վեճակը, Ն. Բ. Էմիր Ապտուլլահ, պատահաբար այցելած ըլլալով Երէքովի այն պատահաբար, ուր իջկանած էր Ս. Պատրիարք Նաչրը, սիրալիր կանգնուած մը աւնեցած է Ն. Ամենպատուութեան հետ:

● Եշ. 18 փետր. — Տ. Արթուռ Արեղայ զարձաւ Երէքովէ, և Տ. Շնորհք Արեղայ զնաց, Ս. Պատրիարք Հօր մօտ:

● Ուր. 19 փետր. — Ամանէն, Տ. Յակոբ քահանայ, Տօքթ. Էթիմեակեան և Պ. Անթիքանեան այցելեցին այսօր Ս. Պատրիարք Հօր, Երէքով:

● Կիր. 21 փետր. — Ս. Պատրիարք մատուցուեցաւ Ս. Յարութեան հայկական վերնամաստրան մէջ, ուր քարոզէ Տ. Տիրայր Վրդ. բնաբանն էր, որուն Աւետարանէն, ՎՄԻ՝ երկնիքը: Տիրբրական ծովուն արկածութիւնը ներկայացնելէ վերջ իրեւ պատիւներ կեանքն ամբարձմենուան, զորս անդապար յառաջ կը բերին մարմնական և հոգեկան կիրքեր, աւելցուց թէ մարգարի մէջ ու շուրջը զոյացած անդո՞րի այդ վտանգներէն խաղաղութեամբ զուրջ գլուռ համար պարտի իր մէջը զգալ ներկայութիւնը անոր օրուն ծայր պատգամն է սիրոյ, յոյսի և բարութեան:

— Իոյամաց Գուրգան պայրամի առթիւ Տ. Մեծարյ Սրբազան, ընկերակցութեամբ Աւագ Թարգման Տ. Հայրիկ Վրդ. այցելեց իոյամաց Միւֆթիին և երևելեաց:

— Ս. Պատրիարք Հայրը զարձաւ Երէքովէն, բաւական կազուրուած:

● Բշ. 22 փետր. — Տ. Մեծարյ Սրբազան, Տ. Սիւն և Տ. Տիրայր վարդապետք և Պ. Կ. Նուրեան Յուպլէ գացին կալուածական գործով եւ երկնիցն զարան:

● Դշ. 24 փետր. — Տ. Մեծարյ Սրբազան ընկերակցութեամբ Տ. Կիրէզ Վրդ. ի այցելեց եւ զիպտական շրջապատը, վեհ. Փարուք Թագաւորի ծննդեան տաքիչաթին առթիւ:

● Եշ. 25 փետր. — Ասորոց Նրուսապէմի հըրաժարեայ եպիսկոպոսը, Տ. Դրիզորիոս ձիպրաւել, հրաժեշտի այց տուաւ Ս. Պատրիարք Հօր:

● Ուր. 26 փետր. — Տեղի տալով իր Թախանազին զիմամեանը, Տեօրէ Փողոզ երկը ընդունած էր Տ. Տիրան Վրդ. ի հրաժարականը ծառակաւորաց վարժարանի և Ընծայարանի տեսչութեան, յաջորդ նշանակելով Տ. Նիգիլէ Վրդ. Տէրտէրեանը: Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Տեօրէ Փողոզի և բորո սուսուցաց, այսօր վարժարան երթալով կատարեց փրկանցումի պաշտօնական արարողութիւնը, զնահատական խօսք ընելով Տ. Տիրան Վրդ. ի և շնորհատական յուսով ժողովանքներ ընելով Տ. Նիգիլէ Վրդ. ի աւնեալիք գործունէութեան համար:

● Եր. 27 փետր. — Ըստ Հին Տոմարի Տեսանւնդաւորի տունին առթիւ Մայր Տաճարին մէջ Տ. Մեծարյ Սրբազան պատուարաց կանգնութիւն և քարոզէ, բնաբանն էր ԱՄՆ սա կայ ի գլուրումն և ի կանգնուէն բարձրաց, բացարքէ թէ ինչպէս Քրիստոս իր ծնունդէն մինչև մահը, նայնպէս քրիստոնէութիւնը իր գոյութեան ամբողջ ընթացքին, աւնեցան իրենց համակրողներն ու հակառակողները միանգամայն. կոչ ուղղեց հաստացանքներուն խոչնդ թէ ո՞րք և իրենց ստոյգ զիրքը կանդէպ Աւետարանի:

● Կիր. 28 փետր. — Ս. Պատրիարքը մատուցուեցաւ Ս. Լըշիշտակայեան, ուր քարոզէ Տ. Յուսէփ Վրդ. Վերեցեք զԹշնամիս ձեր բնաբանին յիշալ. բացարքէ քրիստոնէական ոգին անհամեմատ սրբութիւնը, որ անսահման ներդրածութեան մէջ կը ցուցնէ հոգեկան երջանկութեան զպտիւրքը:

— Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Սերովրէ Վրդ. ի և Տ. Արթուռ Արեղայի, զնաց Ռէմէ, յայցելութիւն գրազեա Պ. Օւլականի, որ քանի մը օրէ ի վեր հիւանդ կը մնար հեն, տեղական Կրիստոնէոցին մէջ աւարկայ պատուական Տօքթ. Պատուեանի և Պ. Գլուսի Յովիպեանի և Պ. Լ. Պուրախանի նման աշխիւ բարեկամներու հոգածու խնամքներուն: Հիւանդախաւուր լուրը Նրուսապէմ ստացուելուն պէս, Ս. Պատրիարք Հօր խնդրանքին համեմատ գրեթէ գիշերախաւու Ռէմէ վտարացած էր նաև աշխուսաբար Տօքթ. Վահան Գալպիեան, Նրուսապէմի կանրանած և ճարտար հայ բժիկը: